Հաշմանդամներին հասարակության մեջ ներառելու գործընթացի բաղադրիչները հանրահայտ են՝ կրթություն հանրային (զանգվածային) դպրոցում, աշխատանք ամենքի հետ զանգվածային հաստատություններում կամ հիմնարկություններում, ընտանիքի կազմում, մշտական ներկայություն հասարակության մեջ՝ ամենօրյա շփումներով և անցուդարձի մասնակցությամբ: Նշված բաղադրիչներն իրականացնելու համար ստեղծվում են համապատասխան կենսապայմաններ՝ մեկ վերջնական նպատակով՝ ձգտել հաշմանդամներին առավելագույնս մերձեցնելու հասարակությանը, որպեսզի նա ոչնչով կամ գրեթե ոչնչով չզանազանվի իր շրջապատի մյուս անհատներից: Ասվածը վերաբերում է հաշմանդամ մարդկանց ընդհանրապես:

Սակայն չտեսնողների առնչությանը կա գործելակերպի մի այլ պայման ևս, ներառման մի այլ բաղադրիչ, առանց որի հասարակությ-

յան լիարժեք անդամ լինելը ինչ-որ տեղ թերի կմնա, և անհատը կզանազանվի իրեն շրջապատող մյուս անհատներից:

Հավաք է. աշխույժ խոսակցություն ու ժամանց: Մասնակիցներն արձագանքում են շրջապատում կատարվածին իրենց վարքով ու շարժումով: Ներկաներից մեկը նույնպես մերված է ընդհանուր մթնոլորտին: Աշխույժ զրուցում է, բայց... մշտապես կենտրոնացած է, մեծ մասամբ հակված է մի կողմի վրա՝ կարծես հայացքով սևեռված մեկի դեմքին կամ մի կետի. անբնական, անսովոր է մարմնի դիրքը: Դեմքի մկաններն անհրաժեշտության դեպքում եռանդուն չեն շարժվում, դիմաշարժի ակնհայտ պակաս կա: Ձեռքերն անշարժ դրված են սեղանին կամ ծնկներին, չկա ձեռնածություն (մանիպուլյացիա): Այսպիսի մարդը վարքով, մասնավորապես՝ շարժումով զանազանվում է մյուսներից: Հարց ու պատասխանին արձագանքում է միայն խոսքով, շուրջը կատարվածին՝ առաջին հերթին ձայնարկություններով կամ ժպիտով ու ծիծաղով: Շարժումն, իբրև արձագանքելու, արտահայտվելու

միջոց, ակնհայտորեն թերի է: Այո, այսպիսի անհատը զանազանվում է ուրիշներից: Պատճառն այն է, որ Նա չի շարժասում (ժեստիկուլյացիայի չի դիմում): Նա վատ գիտե շարժումային լեզուն, որն իր ժողովրդի երկրորդ մայրենի լեզուն է: Խոսքը չի վերաբերում խոլուհամրերի ժեստերի լեզվին, որը հասարակության մի խավի նեղ ոլորտային շարժալեզուն է, այլ ներկա դեպքում՝ յուրաքանչյուր հայի, մեր բոլորի ամենօրյա գործածության շարժումային լեզվին, որին դիմում ենք հնչյունային լեզվին համընթաց կամ առանց վերջինիս՝ որպես հաղորդակցական առանձին միջոցի: Հանրահայտ է, որ մենք՝ հայերս, տաքարյուն ժողովուրդ ենք, շարժասության (ժեստիկուլյացիա) առումով նման ենք իտալացիներին և մեկ ժամ տևող զրույցի ընթացքում շարժասում ենք ավելի քան 120 անգամ: Չտեսնող հայը նմանվում է էստոնացու կամ ֆիննի, որոնք մեկ ժամում շարժասում են մեկ անգամ: Աչքի զարնող տարբերություն. բացակայում են շարժումային լեզվի դրսևորման միջոցները: Համառոտակի ներկայացնենք այդ միջոցները, որոնք հինգն են՝ բերելով երեքական օրինակ:

**Շարժանք** (ժեստ). *ծեռքով մոտ կանչել, գլուխն օրորել*, (հանդիմանել կամ վշտացնել), *մատով սպառնալ*: **Մարմնաշարժանք**. *ոտքից ոտք ճոճվել* (անհարմար վիճակում լինել), *թռչկոտել* (հրճվել), *նստած տեղից վեր կենալ* (հարգանք կամ զարմանք արտահայտել): **Դիմախաղ**. *ունքերը կիտել* (մոռյվել), *շրթունքներն ուռեցնել* (խռովել), *աչքով անել* (ծածուկ մի բան հասկացնել): **Կեց-**

**վածք**. *ոտքը ոտքի վրա գցած նստել* (անփույթ, հանգիստ վիճակում լինել), *ծեռքը ճակատից դնել* (մտորել), *գլուխը ծեռքերի մեջ առնել* (վշտացած կամ մտախոհ լինել): **Քայլվաք**. *թաթերի վրա քայլել* (զգուշավոր լինել), *հեղ-հեղ գնալ* (զարմանալ կամ երկյուղել), *ինքնավստահ քայլել*:<sup>1</sup>

Այժմ մեզ անհրաժեշտ է զուգահեռ անցկացնել խոլուհամրի և չտեսնողի միջև: Խոլուհամրը չի խոսում՝ ունենալով հանդերձ առողջ արտասանական կառույց: Նա ի ծնե չի լսում հնչյունային լեզուն, անհաղորդ է մնում, ուստի այն չի յուրացնում: Իսկ հնչյունային լեզուն հասարակական երևույթ է: Ի ծնե կամ վաղ մանկությունից չտեսնող մարդն անհաղորդ է մնում շարժումային լեզվին, չի ժառանգում նախորդ սերնդի շարժասությունը (ժեստիկուլյացիա), ուստի, ինքն էլ ձեռք չի բերում շարժասելու ավանդույթը: Նա միայն ժառանգում է, այն էլ՝ ոչ ամբողջովին, ոչ պայմանական՝ հուզական շարժությունները (կինեմա - հանրորեն ընդունված իմաստակիր շարժում), որոնք ոչ կամածին են՝ բնազդական, կենսաբանորեն ձեռք բերված նախորդ սերունդների կողմից, ինչպիսիք են՝ *ծիծաղել, լաց լինել, ամբողջ մարմնով դողալ* (խորապես հուզվել), *շրթունքները կծոտել* (ցավ զգալ), *տեղից վեր թռչել* (վախենալ): Ընդ որում, այդպիսիք ևս անկանոնություններ են ունենում կատարման ընդունված տեխնիկայից, լինում են որոշ շեղումներ: Օրինակ, ժպտալիս

1 Տես Ե. Գևորգյան, Շարժումների լեզու (Ներածություն), ԵՊՀ հրատ., Եր., 1988թ., էջ 13-22:

կամ ծիծաղելիս՝ շրթունքների անսովոր դիրք: Պայմանական շարժույթների վերաբերյալ, որոնք կազմում են շարժումային լեզվի մեծագույն մասը, չտեսնողը տեղեկանում է հնչյունային լեզվին տիրապետելուց շատ ավելի ուշ՝ նախ կենդանի խոսքից, ապա գրականությունից՝ նկարագրությունների միջոցով: Բայց նա չի ընկալում, որ իր շրջապատում դրանք ամենօրյա գործածություն ունեն, և քանի որ ինքն էլ դեռևս շարժասելու ավանդույթ չունի, ուստի ընդունում է միայն շարժումային լեզվի գոյությունը՝ որպես այդպիսին: Ճիշտ է, սակայն, որ գիտակցական կյանքի տարիներին ինքնազարգացմամբ զբաղվող չտեսնողը սեփական նախաձեռնությամբ յուրացնում ու գործածության մեջ է դնում որոշ թվով շարժույթներ՝ թեև կատարման թերություններով: Մյուս կողմից իր դերն ունի կյանքը, մասնավորապես՝ պատշաճ վարվեցողությունը, և հաղորդակցվելիս մշտական են դառնում այլևայլ **շարժանքներ** (ժեստ)։ *ձեռքսեղմումով բարևել, ձեռքը կամ մաքր բարձրացնել* (խոսք խնդրել, քվեարկել), *ծափահարել, մարմնաշարժանքներ*։ *նստած տեղից վեր կենալ* (հարգանք արտահայտել), *խոնարհվել* (հարգել կամ շնորհակալություն հայտնել)... Պակաս մատչելի են մնում դիմաշարժերն ու քայլվածքի ձևերը:

Մինչև տասը տարեկանը տեսողությունը կորցրած երեխան (թեև ոչ լիարժեք տիրապետելով), անհամեմատ հաճախ է շարժասում, որովհետև հասցրած է լինում ժառանգել խոսող մարդու շարժումային լեզուն: Սակայն այս դեպքում էլ, տարիքով

պայմանավորված, նախ յուրացրած չի լինում շարժույթների ողջ պաշարը և ապա ներազդում է հետ վարժվելու գործոնը:

Այսպես, ուրեմն, համընդհանուր շարժումային լեզվի գործունեության աչքի զարնող պակասն իրեն զգալ է տալիս:

Շարժումներով արտահայտվելը հատուկ է միայն մարդուն, ուստի, չտեսնող անհատի մեջ ձևավորվում և ամրակայվում են ավելորդ՝ հանրային գործածությունից շեղված շարժումներ՝ հաճախակի ցնցվել, մարմինը շարունակ օրորել, տևականորեն հակվել մի կողմի վրա, ծնոտը հաճախակի ու երկար հպել կրծքին, ծուռ ժպտալ, գլուխը թեք պահել դեպի աջ կամ ձախ ուսը և այլն: Նման շարժույթներով ևս արտահայտվում է ներքին հոգեվիճակ, անհարմարվածություն, սեփական ասելիքի ընդգծում և վերաբերմունք:

Արդ, ո՞րն է տիֆլումանկավարժների խնդիրը.

ա) ուսուցանել թույլ տեսնող կամ չտեսնող մարդուն հայոց շարժումային լեզուն,

բ) վերացնել տեսողության խանգարում ունեցող մարդու շեղումնային, մերժելի շարժասությունը:

Ուսուցումն անհրաժեշտ է սկսել նախադպրոցական տարիքից, ինչը կոյուրացնի աշխատանքը, ինչպես նաև կկանխի խոցելի շարժասության առաջացումը: Ի դեպ, հասարակության լիարժեք անդամի ձևավորման և ներառման համար չտեսնող երեխաներին չափազանց անհրաժեշտ է մանկապարտեզ հաճախել: Որքան ուշ սկսվի շարժումային լեզվի ուսուցումը, այնքան ավելի դժվար կլինի

այն իրականացնել: Շատ մեծ տարիքում, ասենք 50 տարեկանից հետո, այդ կարողության ճևարումը այլևս անհնարին է: Տարիների ընթացքում նվազում է դեմքի մկանների շարժունությունը, շարժումների ճկունությունը՝ ընդհանրապես: Արգելակող հանգամանք է նաև ակտիվորեն շարժասելուն անսովոր լինելը և հաղորդակցման նոր կենսաձևի՝ շարժույթների ամենօրյա մշտական գործածությունը, որն այլևս թվում է խորթ, նույնիսկ՝ ոչ ցանկալի: Ցանկության դեպքում, երբ չտեսնողը բառային նկարագրությունների միջոցով ծանոթանում է շարժույթներին, միևնույնն է՝ կատարման տեխնիկան սովորաբար չի յուրացնում:

Տիֆլումանկավարժները փորձից գիտեն, որ մարդն ի ծնե կամ վաղ մանկությունից տեսողությունը կորցնելու դեպքում բացատրությունից հետո էլ չի կարողանում, ասենք, *ունքերն իրար բերել* կամ *կիտել*, *շրթունքներն ուռեցնել* (խռովել), աչքերն անվնաս լինելու պարագայում չի կարողանում *աչքով անել*, *աչքերը ոլորել* կամ անախորժությունից դեմքը ծամածռել, հանրության կողմից ընդունված կերպով *քիթը կնճռոտել*, *կոպրապովել* (սեթևեթել): Կատարման առումով անծանոթ են մնում քայլվածքի շատ ձևեր (վեհորեն քայլել, երկյուղած քայլել, թռչկոտող քայլվածք)...

Շարժումային լեզվի ուսուցումը հարկ է սկսել ընտանիքում՝ նախքան երեխայի մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը: Դպրոցում, ինչ խոսք, այն առաջին հերթին շարունակում, իսկ եթե ընտանիքում աչքաթող է արվել (մեծ մասամբ այդպես

էլ լինում է), սկսում են դաստիարակներն ու ուսուցիչները: Մեծ՝ ոչ դպրոցահասակ, մարդկանց ուսուցումը կատարվում է վերականգնողական կենտրոններում, մշակույթի տների թատերական ու պարի խմբակներում կամ տիֆլումանկավարժների (կուրավարժների), համապատասխան գիտակ մասնագետների հետ անհատական աշխատանքի միջոցով (նշված ոլորտի ուսումնասիրողներից մեկն է տողերիս հեղինակը):

Պահանջվում է հետևողական երկարատև աշխատանք:

Ոչ ոլորտային, միայն համաժողովրդական գործածության շարժույթները հազարից ավելին են: Դրանք անհրաժեշտ է նախ հասկանալ, ապա՝ յուրացնել կատարման տեխնիկան: Ավելի համառ ջանքեր է պահանջվում մշտական գործածության մեջ դնելը: Հարկ է մեկ առ մեկ մանրամասն պարզաբանել յուրաքանչյուր **շարժանքի** (ժեստ), **մարմնաշարժանքի**, **դիմախաղի**, **կեցվածքի**, **քայլվածքի** կատարման տեխնիկան, իմաստը, տարբերակները, մեղմության ու սաստկության աստիճանները՝ իրենց նրբիմաստներով: Աշխատանքի բերումով՝ տողերիս հեղինակն անձամբ համոզվել է գործի մանրակրկիտ, նրբերանգներով լի լինելու մեջ:

Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարանի<sup>2</sup> կազմության ընթացքում ակնհայտ դարձավ, որ չտեսնող մարդուն շարժույթների մի մասն անծանոթ է, քանի որ

2 Տես Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2003թ.:

դրանց նկարագրությունը կենդանի խոսքում նա չի լսել կամ գրականության մեջ չի կարդացել. Ձեռքի շարժումով միաժամանակ զարմանք ու դժգոհություն արտահայտել (ցուցամատն ու բթամատը բաց են, մյուս մատները ծալած. դաստակի կտրուկ շարժումով ափը ներքևից ուղղվում է դեպի վեր): Ձեռքով հարցնել (ձեռքը, կիսափակ մատներով ափը դեպի վեր բարձրացնել մինչև արմունկի մակարդակին, թեթևակի տարրվերել աջ ու ձախ): Շարժույթների մյուս մասը ծանոթ է մասնակի՝ շարժասական թերություններով: Շփոթ է նկատվում գլխով «ոչ ասել» ու գլուխն հանդիմանաբար օրորել շարժանքի միջև, կամ ուները վեր թողնել և ուները թափահարել առաջ ու հետ շարժանքների միջև:

Շարժույթների մի երրորդ մասը, թեև տեսականորեն ծանոթ է թե՛ կատարման տեխնիկայով, թե՛ իմաստով, սակայն դրանց գործածության պահանջը չի զգացվել: Այսպես կարելի է խոսել այլևայլ շարժույթների բացատրության շարժասական ճշտումների մասին: Մատը դնել շրթունքներին (լռեցնել, շ.՝շ.՝շ.), բայց ցուցամատն ինչ դիրքով դնել կամ մատի մինչև ռոր մասը: Մատով սպառնալ. դեպի ռոր է ուղղված ափը, ռոր ուղղությամբ է շարժվում ձեռքը, արդյոք դաստակի՞ց, թե՛ նախաբազուկը նույնպես: Ինչպե՞ս ձեռքով համաձայնության նշան անել, աչքերով բարևել, ինչպե՞ս ցույց տալ ճանապարհի նեղ լինելը կամ՝ ձուկ, ոսկեդրամ, մկրատ և այլն: Բացատրություններին համընթաց տարիների աշխատանք ու հսկողություն է պահանջվում, որպեսզի շարժասու-

թյունը չտեսնողի կյանքի ամենօրյա մասը դառնա:

Ինչպես ակտիվ շարժունության, այնպես էլ ակտիվ շարժասության նախապայման են մարզական պարապմունքները, պարի ուսուցումը: Տարիներ առաջ հատուկ կրթության մասնագետ-մանկավարժ պրոֆեսոր Ռ. Ազարյանը Հայաստանի կույրերի միավորումում ղեկավարում էր թեթև աթլետիկայի խմբակը (վազք, թռիչք-երկարություն): Չտեսնողների գիշերօթիկ դպրոցում ժամանակին Մագդա Ներսիսյանը պար էր դասավանդում: ՀԿՄ մշակույթի տունը, իսկ վերջերս՝ «Փյունիկ» կազմակերպությունն անց էին կացնում ռոլինգբոլի և գոլբոլի պարապմունքներ ու մրցումներ: Տողերիս հեղինակը մասնակցել է նշված պարապմունքներին և իրեն իրավունք է վերապահում վկայելու, որ դրանք խիստ օգտակար են, իսկ արդյունքները՝ ավելի քան գոհացուցիչ: Մարզախաղերի նշանակությունը չտեսնողների շարժունության գործում, ըստ էության, հայ մանկավարժության մեջ նորություն չէ. Այն տեսականորեն մշակված է:<sup>3</sup> Ընդ որում, պրոֆեսոր Ռ. Ազարյանը նվիրված չտեսնողներին ճիշտ քայլվածքին վարժեցնելու մեթոդիկայի հեղինակն է:<sup>4</sup> «Աթլետիկական վարժությունների և մեթոդների բազմազանությունը, դրանց կիրառումը

3 Տե՛ս Ռ. Ն. Ազարյան, Физическое воспитание слепых и слабовидящих в режиме учебного дня, изд. Всероссийское общество слепых (ВОС), Москва, 1987 г.

4 Տե՛ս Ռ. Ն. Ազարյան, Обучение слепых и слабовидящих детей правильной ходьбе, изд. ВОС, Москва, 1989 г.

հնարավորություն է տալիս նպատակատուղղված կերպով ներգործելու տեսողության խանգարումով երեխաների կենսական կարևոր օրգանների և համակարգերի վրա (նյարդային, մկանային, սրտանոթային, շնչառական), նպաստում է երեխաների ֆիզիկական զարգացման թերությունների շտկմանը և արդյունավետ շարժումների ձևավորմանը»:<sup>5</sup> Համաձայն լինելով այս տողերի հեղինակի մտքին, ինչպես նաև Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Ս. Մուրադյանի այն դրույթին, թե շարժախաղերը փոխհատուցում են կույր և թույլ տեսող երեխաների արատները<sup>6</sup> հարկ է ավելացնել հետևյալը. վերը նշված և հիմնահարցի հետ առնչված այլ հեղինակների՝ չտեսնող երեխաների շարժունությունը զարգացնող քննության առած միջոցներն ու մեթոդները նպաստում են նաև շարժումային լեզվի յուրացմանը, մարմնի անհրաժեշտ դիրքերին վարժվելուն. մարմնի ճկունությունն օգնում է շարժանքների, մարմնաշարժանքների,

քայլվածքի ձևերի տիրապետմանը:

Ինչ վերաբերում է դիմախաղին, ապա այս առնչությամբ մարմնի ճկունությանը զուգընթաց՝ տիֆլումանկավարժը (կուրավարժը) պետք է զարգացնի չտեսնողի շոշափելիքը՝ ընկալելու համար փոքրածավալ ու նուրբ մկանային շարժումները՝ դրանք ցուցադրելով իր իսկ կամ այլ մեկի (տեսնող աշակերտի) դեմքի վրա: Միաժամանակ հարկ է զարգացնել չտեսնողի դեմքի մկանային շարժողունակությունը՝ վարժությունների, դիմաշարժային փորձերի և համապատասխան խաղերի միջոցով (կապված շրթունքների, ունքերի, քթի, այտերի հետ):

Արժևորելով ներառական կրթության մեջ ու հասարակական կյանքում շարժասության (ժեստիկուլյացիա) նշանակությունը՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, տիֆլումանկավարժություն բաժնում 2013թ. սեպտեմբերից ուսումնական պլանում ներդրվել է «Շարժումային լեզու» առարկան, որի նպատակն է ուսուցչական ու միաժամանակ վերականգնողական աշխատանքում նորահաս կադրերին տալ ևս մեկ ներգործուն միջոց: Հարկ է ընդգծել, որ այս առարկան նույն չափով անհրաժեշտ է հատուկ կրթության ֆակուլտետի մյուս բաժիններում ևս:

Սուրդոմանկավարժները արդեն իսկ սովորում են համրերի ժեստերի լեզուն, որը, սակայն, հասարակության մի խավին է վերաբերում. համաժողովրդական շարժումային լեզվի հարցը բաց է մնում: Լոզոպեդները, շտկողական աշխատանքի

5 Ս.Ս. Ղուկասյան, Վ. Մ. Մամաջանյան, Տեսողության խանգարումով երեխաների աթլետիկական վարժությունները՝ որպես նրանց շարժողական ոլորտի խանգարումների շտկման միջոց, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» ժողովածու, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

6 Ս. Վ. Մուրադյան, Տեսողական խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող շարժախաղերը՝ որպես նրանց արատները փոխհատուցող գործընթացի իրականացման պայման, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

առաջին շաբաթներին հոգեբանամանկավարժական նկատառումներով մի կողմ թողնելով հնչյունային լեզուն, խոսքի խանգարում ունեցողների հետ հաղորդակցվում են շարժումային լեզվով: Վերջինս անհրաժեշտ է նաև օլիգոֆրենոմանկավարժներին, որովհետև որոշակի իրադրություններում այն ավելի ներգործուն է լինում, քան հնչյունային լեզուն: Մեր ժողովրդի երկրորդ՝ շարժումային լեզվին տիրապետելուց զատ բոլոր բաժինների ուսանողությունը կստանա նաև տեսական գիտելիքներ շարժումային լեզվի ծագման մասին, կիմանան դրա դրսևորման միջոցները, նմանությունը և տարբերությունը միջազգային շարժույթներից և ամենազխավորը՝ կիրազեկվեն թե ինչ պայմաններում է գործադրվում այն: Ճիշտ նույն կերպ բանասերները, որևէ լեզու սովորելուն զուգընթաց՝ ուսումնասիրում են նաև ընդհանուր լեզվաբանություն:

Եվ այսպես, շարժումային լեզվի իմացությունը, ամենօրյա գործածությունը, չտեսնողի ներառական գործընթացի կարևոր բաղադրիչներից է: Երկրորդ մայրենի լեզվին չտիրապետելը նվազեցնում է նրա շփումը շրջապատի մարդկանց հետ. դեմքը լինում է անարտահայտիչ, աչքի են զարնում մյուս կարգի շարժույթների պակասը, ինչը, անհատի՝ հասարակության լիարժեք անդամներից տարբերվելու պատճառ է դառնում: Վերադառնալով խոլոլուհամրի ու չտեսնողի համեմատությանը հարկ՝ է նշել նաև հետևյալը՝ առաջինն իր կրթական բարձր կետին է հասած լինում, երբ կարողանում է խոսել ու

դիմացինի շրթունքների շարժումից կարդալ բանավոր խոսքը, ինչը երկար տարիների համառ աշխատանքի արդյունք է: Ոչ մի համեմատություն չի կարող լինել խոլոլուհամրերի խոսելու ունակություն ձեռք բերելու, անհաղթահարելի թվացող դժվարությունների և չտեսնողի կողմից շարժումային լեզուն յուրացնելու ու գործածելու ջանքերի միջև: Վերջինը նույնպես տևական ժամանակի խնդիր է, բայց հենց սկզբից՝ հեշտ բացատրելի ու չտեսնողի համար համեմատաբար մատչելի: Այսուհանդերձ, խոսել կարողանալու մակարդակին հասնելը մտցված է խոլոլուհամրերի դպրոցական ծրագրերում, մինչդեռ չտեսնող երեխային շարժումային լեզուն ուսուցանելը՝ ոչ: Պատճառը, թերևս, այն տարածված սխալ կարծիքն է, թե ինքնուրույն էլ հնարավոր է տիրապետել խնդրո առարկա լեզվին: Բայց ավելի իրական ու համոզիչն այն է, որ չեն եղել համապատասխան տիֆլումանկավարժներ, որոնք տիրապետելով նյութին՝ ուսուցանեին երեխաներին, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրածներին: Այսպես, թե այնպես, գործի սկիզբը դրված է. Երևանի պետական մանկավարժական համալսարանում շարժումային լեզուն դասավանդվում է:

Շրջանավարտներ տալուն, բնականաբար, կհաջորդի գործնական, վերականգնողական ու մանկավարժական աշխատանքի մի նոր ուղղություն ևս:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ե. Գևորգյան, Շարժումների լեզու (Ներածություն), ԵՊՀ հրատ., Եր., 1988:

2. Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 2003:

3. Ս.Ս. Ղուկասյան, Վ. Մ. Մամաջանյան, Տեսողության խանգարումով երեխաների արժեքիկական վարժությունները՝ որպես նրանց շարժողական ոլորտի խանգարումների շտկման միջոց, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» ժողովածու, Զանգակ-97, Եր., 2008թ., թիվ 7:

4. Մուրադյան Ա.Վ., Տեսողական խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող շարժախաղերը՝ որպես նրանց արատները փոխհատուցող գործընթացի իրականացման պայման, Զանգակ-97, Եր., 2008, թիվ 7:

5. Азарян Р.Н., Физическое воспитание слепых и слабовидящих в режиме учебного дня, изд. Всероссийское общество слепых, Москва, 1987 г.

6. Азарян Р. Н., Обучение слепых и слабовидящих детей к правильной ходьбе, изд. 1989г.

7. Critchley M., The Language of Gesture, London, 1951 y.

## РЕЗЮМЕ

### К ВОПРОСУ ОБ УСЛОВИЯХ ИНТЕГРАЦИИ В ОБЩЕСТВО ЛЮДЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ

Е. У. Геворкян

*профессор кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор филологических наук*

Для интеграции в общество необходимо, чтобы незрячий освоил и пользовался жестикуляцией, свойственной своему народу. Армяне, как и итальянцы в течение одночасовых бесед жестикулируем более чем 120 раз. Человек с нарушением зрения также дол-

жен пользоваться губами, телодвижениями, мимикой лица, походкой. В противном случае он будет отличаться от окружающих своим неподвижным лицом ( Бестер Китон), недостаточностью телодвижений и его интеграция в общество будет неполноценной.



**SUMMARY**

**CONDITIONS OF INTEGRATIONS INTO SOCIETY OF PEOPLE WITH VISUALLY IMPAIRED**

**E.H. Gevorgyan**

*Doctor of Philological Sciences, Professor of the Chair of Special Pedagogy and Psychology Khacatur Abovyan State Pedagogical University*

For integration into society it is necessary that visually impaired person would use the gesticulation peculiar to the people. We, Armenians, as well as Italians during the 1 hour of conversation gesticulate more than 120 times.

The person with visual impair-

ments also has to use lips, bodymovements, gestures and a facial expression, article and gait. Otherwise it will differ from people around the motionless person (Bester Keaton), insufficiency of gestures and his integration in society will be defective.

**ԴԻՍԼԵՔՍԻԱՅԻ ՆԱԽԱՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ  
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Ա. Գ. Գրիգորյան**

*Խաչապուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի անբիոնի  
դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու*

**Հանգուցային բառեր և արտահայտություններ՝** դիսլեքսիա, դիսգրաֆիա, տեսողատարածական պատկերացումներ, խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացներ, հնչյունային լսողություն, կարդալու գործառնության հիմք, նախատրամադրվածություն, աճի սխալներ, հոգեֆիզիոլոգիական կառուցվածք:

Ինչպես հայտնի է, դիսլեքսիան կարդալու կարողության մասնակի յուրահատուկ խանգարում է, որը պայմանավորված է բարձրագույն հոգեկան գործընթացների թերի ձևավորմամբ և արտահայտվում է կայուն բնույթի կրկնվող սխալներով:

Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս կարդալու գործընթացի խաթարման սերտ պայմանավորվածությունը ոչ միայն խոսքային խանգարումներով, այլև այնպիսի հոգեկան գործընթացների թերզարգացմամբ, ինչպիսիք են՝ մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը, ինչպես նաև՝ տեսողատարածական պատկերացումները, տեսաշարժողական հմտությունները:

Հատուկ գրականության մեջ բերված տվյալները փաստում են, որ

կարդալու գործընթացի հոգեֆիզիոլոգիական կառուցվածքի հիմքը տեխնիկական և իմաստային կողմերի սերտ համագործակցությունն է [1; 4; 5; 8]:

Երեխաների կարդալու հմտության ձևավորումը բավականին խորությամբ ուսումնասիրված և լուսաբանված է հայրենական, ռուսական և արտասահմանյան հետազոտողների կողմից: Այն իր ձևավորման ընթացքում, անցնել մի շարք առանձնահատուկ փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները և հնարները: Կարդալու հմտության ձևավորման բոլոր աստիճանները սերտորեն պայմանավորված միմյանցով, ընդ որում, ամեն հաջորդ աստիճան սկսվում է ձևավորվել նախորդ աստիճանում, իսկ յուրաքանչյուր նախորդ աստիճան կազմում է հաջորդի բովանդակությունը:

Ներկայումս մասնագիտական գրականության մեջ շատ է քննարկվում երեխաներին ավելի վաղ տարիքում կարդալ սովորեցնելու հարցը: Սակայն գրաճանաչությունը երեխայի համար նշանակալի իրադարձություն է այն առումով, որ փոխվում է նրա տարիքային առաջատար գործունեությունը, և տառաճանաչ դառ-

Նալով՝ երեխան յուրացնում է բանավոր խոսքում արտաբերվող ամեն մի հնչյուն, որը գրավորում ունի իր գրաֆիկական պատկերը՝ տառը՝ գրաֆեման[2; 3; 6]:

Քանի որ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է տասներկուամյա միջնակարգ կրթություն՝ ուսումնական հաստատություններ են ընդունվում այն երեխաները, որոնց 6 տարին դեռևս լրացած չէ, իսկ գրաճանաչության ուսուցման նախապատրաստումն իրականանում է մինչև 7 տարեկանը, զգալի խնդիրներ են առաջանում դիսլեքսիայի հայտնաբերման, կանխարգելման, գնահատման գործընթացներում: Այսինքն՝ հաճախ չլինելով դիսլեքսիկ, երեխան թողնում է բանավոր կամ գրավոր խոսքի խանգարում ունեցողի տպավորություն, մինչդեռ նա դեռս չի յուրացրել մայրենի լեզվին բնորոշ այն գրաֆիկական համակարգը, որը թույլ է տալիս համարել նրան գրաճանաչ:

Ըստ վերջին տարիների մասնագիտական գրականության մեջ ներկայացված ուսումնասիրությունների՝ նախադպրոցականների կարդալու կարողության ձևավորման գործընթացում հիմնականում ուշադրություն էր դարձվում խոսքի զարգացմանը: Մի ժամանակ թյուր կարծիք կար այն մասին, որ եթե նախադպրոցականն ունի խոսքային խանգարում, ապա նա նախատրամադրվածություն ունի դիսլեքսիայի նկատմամբ: Այդ պատճառով հիմնականում ուշադրություն էին դարձնում այն երեխաներին, ովքեր ունեին որևէ խոսքային խանգարում [1,3,7]:

րում [1,3,7]:

Սակայն միշտ չէ, որ կարելի է ուղիղ կապ տեսնել երեխայի բանավոր խոսքի զարգացման մակարդակի և կարդալու գործընթացի արդյունավետ իրականացման միջև: Դա մասնավորապես հիմնավորվում է այն կարևոր փաստով, որ դիսլեքսիան հետևանք է հոգեկան բարձրագույն գործընթացների համակարգային խանգարման, որն ընդգրկում է ոչ միայն երեխայի խոսքային, այլև՝ ոչ խոսքային հոգեկան գործընթացները, տարածական պատկերացումները, ուշադրությունը, ինչպես նաև՝ տառի պատկերի ձևավորման գործընթացը:

Դիսլեքսիայի նկատմամբ երեխաների նախատրամադրվածության հայտնաբերումը ենթադրում է կարդալու գործընթացի հիմքում ընկած խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրմանը միտված հատուկ շտկողական աշխատանք: Այդպիսի աշխատանքները, ըստ մասնագետների, պետք է սկսել 5 տարեկանից: Կարդալու կարողության խաթարման ուշ հայտնաբերումն առաջացնում է զգալի դժվարություններ և պահանջում է երկարատև շտկողական միջամտություն: Ինքնատիպ դժվարությունների ավելի վաղ բացահայտման և իրականացվող շտկողական աշխատանքի դրական ելքի դեպքում հնարավոր է դառնում կանխարգելել երկրորդական՝ հուզական և վարքի խանգարումները [2; 8; 9;10] :

Կարդալու կարողության յուրահատուկ խանգարման՝ դիսլեքսիայի նկատմամբ հրատապ հետաքրքրվածությունը պայմանավորված

է նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի խանգարումները ժամանակին կանխարգելելու անհրաժեշտությամբ:

Մեր կարծիքով, կարդալու ունակության ձևավորման գործընթացին արգելակում են մի շարք հոգեկան գործընթացների խանգարումներ, որոնք հանդես գալով միանգամից՝ կազմալուծում են կարդալու գործառության հիմքը:

Կարդալու կարողության խանգարումներն առաջացնում են սովորողների առաջադիմության լուրջ դժվարություններ և ամբողջապես արգելակում ընդհանուր գիտելիքների լիարժեք յուրացումը, եթե ժամանակին դիսլեքսիան չի բացահայտվում և կանխարգելվում:

Դիտարկվող խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել համալիր ծրագիր՝ երեխաների բանավոր խոսքի ուսումնասիրման և դիսլեքսիայի նկատմամբ ռիսկի խմբի հայտնաբերման աշխատանքներն իրականացնելու համար:

2006-2008 ուսումնական տարիներին մեր կողմից իրականացվող հետազոտությունը կազմակերպվել է Երևանի թիվ 166, 278 նախադպրոցական հաստատությունների և թիվ 109, 138, 155 հանրակրթական դպրոցների բազայի հիման վրա: Հետազոտվել են նշված մանկապարտեզների ավագ խմբերի 5-6 տարեկան նախադպրոցականներ, ովքեր պատրաստվում էին հաճախել հանրակրթական դպրոց: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել է 84 երեխա:

Ըստ բժշկահոգեբանամանկավարժական հանձնաժողովի գնա-

հատման փաստաթղթերի՝ հաստատվել է, որ բոլոր երեխաների մտավոր զարգացումը, տեսողությունը և լսողությունը նորմայի սահմաններում են: Ուսումնասիրության սկզբում հետազոտվել է նախադպրոցականների բանավոր խոսքը, խոսքալսողական հիշողությունը և այնպիսի ոչ խոսքային հոգեկան գործընթացներ, որոնք ընկած են կարդալու կարողության ձևավորման գործընթացի հիմքում:

Հետազոտությունն սկսվում էր երեխայի հետ անցկացվող այնպիսի զրուցի և վստահության գոտու ստեղծմամբ, որն ապահովում էր երեխայի հուզական վիճակի, որոշակի դրդապատճառների, պարապմունքի նկատմամբ հետաքրքրության առաջացման, աշխատանքի մեջ ակտիվ ներգրավվելու պայմաններ:

Հետազոտության ընթացքում կիրառվում էին այնպիսի խաղային և ուսուցողական հնարներ, որոնք խթանում էին երեխայի տարաբնույթ գործունեությունը:

Առաջադրանքների կատարման հրահանգները երեխաներին տրվում էին բանավոր: Դրանք ներկայացվում էին երեքից հինգ համառոտ նախադասությունների միջոցով, որոնցից յուրաքանչյուրի ծավալը չէր գերազանցում վեցից յոթ բառը: Հանձնարարության պատասխանը նախադպրոցականները տալիս էին բանավոր, կամ ցուցադրում դրանց գործնական կիրառումն ընթացքը: Երեխաների բոլոր պատասխանները գրանցվում էին հետազոտության արձանագրություններում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ թույլ տվեց հե-

տազոտված բոլոր երեխաներին բաժանել 3 խմբի:

Հետագա հետազոտությունները կատարվեցին 2007-2008 ուսումնական տարում: Հետազոտությանը մասնակցեցին նույն 84 երեխաները, ովքեր այդ պահին ավարտում էին հանրակրթական դպրոցի առաջին դասարանը:

Հետազոտման ընթացքում ուսումնասիրվեց յուրաքանչյուր երեխայի կարդալու կարողության ձևավորման անհատական աստիճանը: Սա անհրաժեշտ էր նրանց բանավոր խոսքի իրական վիճակի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների աստիճանական ձևավորման բացահայտման համար, ինչը պատկերացում էր տալիս կարդալու հմտության զարգացման աստիճանի վերաբերյալ:

Բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ տվեց նախադպրոցականների յուրաքանչյուր խմբի բանավոր խոսքի բաղադրամասերի ձևավորման առանձնահատկությունները բացահայտելու հնարավորություն:

Այսպիսով, կարդալու տեխնիկական և իմաստային կողմերի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն տվեց բացահայտելու, որ առաջին խմբի աշակերտների մեծամասնությունը (92,5%) ցուցաբերում էր վերոհիշյալ հատկանիշների ձևավորվածության բավարար մակարդակ: Փորձարկվողների կարդալու առանձին, ոչ յուրահատուկ խանգարումները պայմանավորված էին այն

կարևոր հանգամանքով, որ տվյալ հմտության ձևավորման գործընթացը դեռևս վերջնականապես կայացած չէր:

Մյուս սովորողների (2,5%) կարդալու հմտության ձևավորման դժվարությունները կրում էին կայուն կրկնվող բնույթ: Կարդալու կարողության ձևավորման հիմքում ընկած խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հայտնաբերելու, որ առաջին խմբի փորձարկվողների 2,5%-ն ունի կարդալու գործառության հիմքի ցածր աստիճան՝ արտահայտված տարածական պատկերացումների ձևավորվածության անբավարարությամբ: Այս դեպքում կարելի է ասել, որ այս աշակերտներն ունեն դիսլեքսիա:

Առաջին խմբի մյուս հետազոտվողների այդ ցուցանիշները համապատասխանում էին զարգացման ընդունված մակարդակին:

Կարդալու տեխնիկական և իմաստային կողմերի ուսումնասիրությամբ բացահայտեցին երկրորդ խմբի դպրոցականների մեծամասնության (76,4%)՝ տվյալ կարողության ձևավորվածության անբավարարությունը:

2-րդ խմբի առաջին դասարանցիների 23,6%-ը ցուցաբերեց այլ արդյունքներ: Կարդալու տեխնիկական և իմաստային կողմերի առանձնահատկությունները մատնանշում էին, որ սովորողների 18,4%-ն ուներ կարդալու կարողության նորմալ ձևավորվածության մակարդակ, իսկ աշակերտների 5,2%-ն ուներ դիսլեքսիա:

Երրորդ խմբի փորձարկվողներ-

րի (100%) կարդալու իմաստային և տեխնիկական կողմերի ստուգումամբ պարզվեց, որ բացի աճի սխալներից, այս սովորողները թույլ են տալիս մեծաքանակ կոպիտ սխալներ, որոնք հանդիսանում են «դիսլեքսիկական»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կարդալու գործընթացի համակարգային հետազոտությունը հաստատում է այն ենթադրությունը, որ երրորդ խմբի սովորողները պատկանում են դիսլեքսիա ունեցողների խմբին:

Բացի փորձարարական խմբից, մեր կողմից ուսումնասիրվել են նույն շրջանի տարբեր նախադպրոցական հաստատություններ հաճախող ևս 84 երեխաների անձնական փաստաթղթերը, ընդ որում, այդ նախադպրոցականների խոսքի շարժընթացային զարգացումը հետազոտվել է փորձարարական խմբին զուգահեռ՝ մեկ տարի դպրոց հաճախելուց հետո:

Մեր ուսումնասիրությունները թույլ տվեցին եզրակացնել, որ ստուգողական խմբի նախադպրոցականներից շատերն ունեին նախատրամադրվածություն դիսլեքսիայի նկատմամբ, և որոշակի տոկոսային հարաբերություն էր կազմում ռիսկի այն խումբը, որը դեռևս գրաճանաչության գործընթացում կարող էր գնահատվել որպես կարդալու կարողության խանգարում ունեցող:

Մեր կատարած հետազոտությունները բացահայտեցին մեկ այլ հետաքրքիր երևույթ, ըստ որի՝ հանրակրթական և ներառական դպրոցներ հաճախող սովորողներից շատերը, որոնց փաստաթղթերի

ուսումնասիրումը նախկինում թույլ էր տալիս կարծել, որ նրանք կարող են ունենալ կարդալու կարողության տարբեր տիպի խանգարումներ, չէին առանձնացվել որպես ռիսկի խմբի երեխաներ: Վեց ամիս կամ մեկ տարի սովորելով վերոհիշյալ դպրոցում՝ հայտնվել էին Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ.8 հատուկ կրթահամալիրում, քանի որ նրանց հետ չէր տարվել ոչ մի հետազոտական կամ լոգոպեդական աշխատանք: Այս դպրոցի պայմաններում, ըստ համապատասխան փաստաթղթերի, նշված երեխաները գնահատվում էին որպես դիսլեքսիա կամ ԽԸԹ ունեցողներ:

Ընդ որում, մեր կողմից մշակված դիտարկվող մեթոդիկական տալիս է նախադպրոցական տարիքում այլ խոսքային խանգարումները ևս հայտնաբերելու հնարավորություն, որոնք ի հայտ են գալիս և առավել վառ արտահայտվում միայն գրաճանաչության կազմակերպման ժամանակ: Մեր կողմից ուսումնասիրված բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացներն ամբողջականորեն ներկայացնում են տվյալ երեխայի լեզվական կարողությունների հնարավորությունները, որոնց թերզարգացումը հաճախ նախադպրոցական տարիքում չի արտահայտվում տարբեր պատճառներով:

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է հավաստիացնել, որ եթե ժամանակին այս 84 երեխաների հետ նախադպրոցական տարիքում տարվեր նշված հետազոտությունը, որը բացահայտում էր բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ

խոսքային հոգեկան գործընթացների խանգարումը, ապա նրանք ժամանակին գնահատվելով որպես խոսքային խանգարում ունեցողներ՝ կհաճախեին լոգոպեդական կետեր, կամ էլ համապատասխան հաստատություններում կստանային լոգոպեդական օգնություն, ինչն էլ նրանց հնարավորություն կտար նախադպրոցական տարիքում կանխարգելելու դիսլեքսիան:

Այսպիսով, կարդալու կարողության ձևավորման հիմքում ընկած բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և մի շարք ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտման նպատակով հատուկ մշակված մեթոդիկական կարող է կիրառվել նախադպրոցականների դիսլեքսիայի վաղ հայտնաբերման և կանխարգելման բարդ գործընթացներում:

Հաստատված տվյալները վկայում են, որ կարդալու կարողության ձևավորումն ապահովող բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրման արդյունքների վերլուծության հիման վրա առավելապես կարելի է հայտնաբերել դիսլեքսիայի առաջացման ռիսկի խումբը, ինչը մատնանշում են հետազոտության կիրառված մեթոդների արդյունքների ուսումնասիրությունները: Համաձայն դրանց՝ կարելի է հաստատել կարդալու կարողության գործառույթային հիմքի զարգացման մակարդակի և կարդալու գործընթացի իրականացման առանձնահատկությունների վիճակագրական զգալի կապը:

Այսպիսով, կարդալու գործառույթային հիմքի ձևավորվածության որոշման համար մշակված մեթոդիկական կարող է ծառայել նախադպրոցական տարիքի երեխաների դիսլեքսիայի առաջացման ռիսկի խմբի բացահայտմանն ու կանխարգելմանը, ինչը հիմք է տալիս դատելու տվյալ կանխարգելիչ աշխատանքի հոգեբանամանկավարժական արդյունավետության մասին:

Մեր անցկացրած հետազոտության շարունակական հեռանկարներն անպայմանորեն պետք է հաշվառեն դիսլեքսիայի մեխանիզմների պաթոգենետիկական ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև՝ անհատական, տարբերակված մոտեցման հիման վրա ուղղված լինեն երեխաների կարդալու կարողության յուրահատուկ խանգարումների կանխարգելմանը:

Մանկավարժական նպատակաուղղված մոտեցումներն ու միջոցները ստեղծում են առաջին հայացքից ոչ այնքան բարդություններ կայացնող բանավոր հաղորդակցման կարողության խանգարումը կանխարգելելու հնարավորություն դեռևս նախադպրոցական տարիքում: Արդի ժամանակահունչ պահանջներին համապատասխան՝ կրթական բարեփոխումների շրջանակներում իրականացվող հիմնավորված լոգոպեդական միջամտությունը տալիս է կանխարգելիչ և շտկողական աշխատանքների կազմակերպման ժամանակ նոր մոտեցումների ցուցաբերման հնարավորություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Корнев А.Н. Нарушения чтения и письма у детей. – СПб.: ИД «МиМе», 1997.–286 с.
2. Лалаева Р.И. Нарушения чтения и пути их коррекции у младших школьников. СПб.: Союз, 1998. – 224 с.
3. Левина Р.Е. Недостатки произношения, сопровождающиеся нарушениями чтения и письма./Логопедическая работа в школе. – М.: Изд-во АПН РСФСР, 1953.–С.3-18
4. Журова Л.Е. Обучение грамоте в детском саду. –М.: Педагогика, 1979. –151 с.
5. Спирова Л.Ф. Недостатки чтения у детей и пути их преодоления.// Недостатки речи у учащихся младших классов массовой школы. –М.: Просвещение, 1965. – С. 67-84.
6. Соколова Л.В. Системная организация интегративной деятельности мозга учащихся в процессе формирования навыка чтения: Дис. ... канд. биол. наук.–М., 1991.–208 с.
7. Хватцев М.Е. Логопедия. – М: Медицина, 1959. – С. 85-98.
8. Эльконин Д.Б. Как учить детей читать. – М.: Знание, 1991. – 80 с.
9. Badian N.A. The prediction of good and poor reading before Kindergarten entry: A nine year follow-up.// Journal of Learning Disabilities, 1988, Vol. 21. – P. 98-123.
10. Miles T.R., Miles E. Teaching Needs of Seven Year Old Dyslexia Pupils. Department for Education and Science, London, 1984. – P. 40-57.

## РЕЗЮМЕ

### РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ ВЫЯВЛЕНИЕ ПРЕДРАСПОЛОЖЕННОСТИ ДИСЛЕКСИИ

**А.Г. Григорян**

*преподаватель кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна,  
кандидат педагогических наук*

Высокая распространенность нарушений чтения у младших школьников делает актуальной проблему выявления предрасположенности к дислексии у детей дошкольного возраста. Для выявления группы риска возникновения дислексии необходимо разработать специальные комплексные программы обследования дошкольников,

которые позволят определить степень сформированности устной речи, вербальных и невербальных психических функции, лежащих в основе становления навыка чтения. Комплексное изучение у детей уровня развития указанных функций поможет составить прогноз успешности формирования навыка чтения.



**THE RESULTS OF REVELATION AND RESEARCH OF DYSLEXIA'S  
PREDISPOSITION**

**A.G. Grigoryan**

*Candidate of Pedagogical Sciences, Lecturer of the Chair of Speech and Rehabilitation therapy Khachatur Abovyan Armenian State Pedagogical University*

A high percentage of young dyslexic school-children makes the problem of revelation of predisposition to this speech impediment a crucially vital issue. Specific complex programs are to be worked out to examine all pre-school-children and define the risk group of the origins of dyslexia. This will permit

determination of the degree of verbal and non-verbal psychological functions, which are the fundamentals of reading skills formation. The following study of the development of the functions mentioned above will help foresee successful formation of reading skills.

**ՍՊՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶՎԱԾՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

*Ս.Վ. Գրիգորյան*

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պեդագոգիկ ինստիտուտի  
կինեզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր*

*Մ.Ս. Գրիգորյան, Զ.Մ. Միրիջանյան*

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պեդագոգիկ ինստիտուտի  
կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոսներ*

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** գործառուության համակարգերի տեսություն, մարզիկի վարքային գործունեություն, սպորտային վարպետություն, մարզվածության մակարդակ:

Ինչպես մարդկային գործունեության ցանկացած ոլորտ, այնպես էլ ժամանակակից սպորտը բնութագրվում է բացառապես բուն գարգացումով և սպորտային նվաճումների չդադարող աճով:

Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելը, ինչպես և ցանկացած գործունեության տեսակ, գիտակցված վարքային գործողություն է: Յուրաքանչյուր վարքային գործողություն, որն ակնկալում է մեծ և փոքր արդյունքներ, անխուսափելիորեն ձևավորվում է գործառուության համակարգի սկզբունքով: Պ.Կ. Անոսիևի կողմից առաջարկված վարքային կենտրոնական կառուցողական համակարգն արդյունավետ եղավ գրեթե բոլոր՝ պարզ և բարդ, կենսաբանական և սոցիալական, բնածին և ձեռք բերովի, կենդանիներին և մարդուն հատուկ վարքի տեսակի բացատրության համար:

Սպորտային վարպետության կատարելագործման հնարավորությունների ուսումնասիրման ժամանակ անհարժեշտ է մարդու սպորտային գործունեությունը գնահատել ինչպես ի պատասխան ծանր ֆիզիկական բեռնվածությանը հարմարեցնող օրգանիզմի ռեակցիաների, այնպես էլ համալիր վարքային ռեակցիաների տեսանկյունից:

Որոշակի հաջորդականությամբ ձևավորված գործառուության համակարգերի տեսությունը, դիտարկելով նպատակաուղղված վարքային գործողությունը որպես համալիր դինամիկ կառույց, ունի ինքնատիպ հանգուցային մեխանիզմներ, որոնք միացնում են կենտրոնական նյարդային համակարգի տարբեր մակարդակները և մասնակցում բարդ հարմարողական վարքի ձևավորմանն ու իրականացմանը: Դրանով պայմանավորված՝ անկախ իր կազմակերպվածության մակարդակից և ներառված բաղադրիչների քանակից՝

բոլոր գործառույթային համակարգերն ունեն սկզբունքնորեն միևնույն կառուցվածքը, որտեղ արդյունքը դոմինանտ գործոն է և կանոնավորում է համակարգերի գործունեությունը [1; 3]:

Կարելի է ասել, որ մարդկային գործունեության կարևորագույն ոլորտներից մեկը, որտեղ արդյունքը և արդյունքի գնահատման կարևորությունը դառնում են անհատական ու խմբային վարքագծի կենտրոնական գործոն, մարդու սպորտային և հատկապես խաղային գործունեությունն է:

Հատկապես այս ոլորտում արդյունավետ և արդյունքի կարևորության համալիր հետազոտությունները հասկանալի են, քանի որ ինչպես ամբողջ թիմի խմբային գործունեության, այնպես էլ յուրաքանչյուր խաղացողի անհատական գործունեության արդյունավետությունը չափազանց ակնհայտ է:

Գործառույթային համակարգի տեսության շրջանակներում ձևավորվել են համալիր վարքային «քվանտային» սկզբունքներ, որոնց համաձայն՝ մարդու նպատակաուղղված արտադրողական ողջ գործունեությունը բաժանվում է առանձին մասերի՝ «քվանտերի»՝ ներառելով կենսաբանական կամ սոցիալական ցանկություն, որն առաջանում է նրա դրդապատճառների հիմքում, ինչպես նաև դրանց բավարարման տարբեր մակարդակներում [3]:

Վարքային «քվանտային» տեսության սկզբունքների օգտագործումը տալիս է մրցումներին մասնակցելու, իրական պայմաններում մարզիկի նպատակադրված գործունեության

նուրբ վերլուծության, փուլային և վերջնական մարզական արդյունքներին հասնելու հարցում մարզիկի ներդրած «ֆիզիոլոգիական գինը» և դրանով իսկ օպերատիվ ձևով նրա պատրաստականության և վարժությունների կատարման թույլ կողմերը հայտնաբերելու հնարավորություններ: Դրանք պայմանավորում են մարզիկի հետհոգեհուզական լարվածության մակարդակը: Նման իրավիճակի առաջացման հիմքում ընկած են մրցումների կամ խաղի ռիթմի հետ նրանց անհամաձայնեցման արդյունքներով պայմանավորված ներքին մեխանիզմների ֆիզիոլոգիական գործընթացների միաժամանակյա վերակառուցումը կամ խաթարումը:

Հիմք ընդունելով «քվանտային» տեսության սկզբունքները՝ վարքը կիրառվեց հատուկ հետազոտությանն առաջադրված հարցերի լուծման համար:

Հետազոտության խնդիրն էր՝ հայտնաբերել մարզիկի վեգետատիվ գործառույթների ցուցանիշների շարժընթացը սպորտային գործունեության ժամանակ՝ համալիր վարքային ռեակցիայի ծավալման տարբեր փուլերում:

Հետազոտության այս փուլում մենք փորձել ենք պարզել, թե արդյոք մարզիկի բարձր մարզվածության վիճակում գոյություն ունեն վեգետատիվ զուգահեռականներ, և ինչպիսին է օրգանիզմի գործառույթային ցուցանիշների շարժընթացը՝ մարզական վարպետության ձեռք բերման ընթացքում:

Մեր հետազոտությունների ընթացքում իրականացրել ենք սպոր-

տային գործունեության տարբեր փորձեր և գնահատել ենք մարզվածության տարբեր մակարդակ ունեցող ֆուտբոլիստների օրգանիզմի տարբեր վեգետատիվ համակարգերի գործառության վիճակը :

Իրականացվել է սիրտ-անոթային, շնչառական համակարգերի, մարմնի կազմի և հեղուկների համալիր ուսումնասիրություն վերը նկարագրված կենսաէլեկտրական դիմադրողականության վերլուծության մեթոդով, մարզիկների տարբեր տարիքային խմբերում, (տարբեր խաղային և մարզվածության ստաժով), խաղային ցիկլի տարբեր փուլերում, ինչպես նաև նպատակաուղղված վարքային գործողության ձևավորման տարբեր փուլերում և տարբեր սպորտային վարպետության մակարդակով [2]:

Համակարգածին վարքային գործողության պատկերացումը գործառության համակարգերի ընտրողական ապահովության սկզբունքը տարածում է վարքային գործողության և դրանց ձևավորման շարժընթացի վրա անհատների կյանքի ընթացքում: Համակարգածին վարքային գործողությունն առաջին հերթին առնչվում է այնպիսի վարքային գործողության համակարգային ճարտարաբանության հանգույցային փուլերին, ինչպիսիք են գործողության արդյունավետության ձևավորման, ակցետտորի և էֆֆերենտ սինթեզի փուլերը [1]: Միանման պայմաններում երկակի նվաճումների արդյունավետության պահանջարկի դեպքում, այսինքն՝ գործողության ավտոմատացման ժամանակ համապատասխան «քվանտները» կարող

են կրկին ձեռք բերել կոշտ ծրագրավորման հատկություն, երբ վարքը զգալիորեն որոշվում է հիշողության մեխանիզմներով: Այլ բառերով՝ ըստ Ի. Պ. Պավլովի՝ ձևավորվում է «դինամիկ ստերեոտիպ»:

Խոսելով գործառության համակարգի կազմության մասին՝ մենք նկատի ունենք, որ հետազոտության համար նախատեսված, յուրաքանչյուր գործառության համակարգ անխուսափելիորեն գտնվում է մոլեկուլյար ամենանուրբ համակարգում և համակարգայի կազմակերպման ավելի բարձր մակարդակով , ինչպես օրինակ՝ ամբողջ վարքային գործողությունը:

Գործառության համակարգին բնորոշ հատկություններից մեկը շարժընթացային, նրա մեջ մտնող բաղադրիչների շարունակական փոփոխականությունն է այնքան ժամանակ, մինչև ստացվի համապատասխան ընդունելի արդյունք: Պարզ է, որ առաջին պլանում իրական գործառության համակարգի ձևավորման մեջ առաջ են գալիս արդյունքի պահանջները և կառուցվածքի շարժընթացային ունակության հատկությունները, որոնք ապահովում են գործառության համակարգի արագ ձևավորումն ու անհրաժեշտ արդյունքի ստացումը:

Շարժունակության հատկություն ասելով՝ հասկանալ յուրաքանչյուր մանրահաճախ համակցումների վայրկյանական կառուցման հնարավորությունը, որը գործառության համակարգին տալիս է օգտակար հարմարվողական արդյունք ստանալու հնարավորություն: Գործնականորեն, եթե չլիներ արագ հավա-

քազրվելու այս կառուցվածքային պոտենցիալ ունակությունը (ընդ որում, ցանկացած համադրությամբ), ապա գործառույթային համակարգերի արագ կազմակերպումը կլինեն անհնարին, հետևաբար՝ վարքային գործունեությունը՝ ոչ կատարյալ:

Մանրամասն վերլուծելով մեր ուսումնասիրած ծավալուն նյութը՝ տարիների ընթացքում, մենք կարողացանք բացահայտել այն ցուցանիշները, որոնք ունեն նշանակալի փոփոխականություն տարբեր տարիքային խմբերում, ինչպես նաև խաղային սեզոնի տարբեր ժամանակահատվածներում: Հայտնաբերվեցին նաև քիչ փոփոխվող ցուցանիշներ: Մեզ հաջողվեց օրգանիզմի տարբեր համակարգերի ամենարդյունավետ ցուցանիշների համադրումը, որոնք համապատասխանում են նրա լավագույն գործառույթային վիճակին: Սակայն երբ համեմատում ենք մարզիկի ներկա ֆունկցիոնալ վիճակը խաղային արդյունավետության հետ, (ֆուտբոլի դեպքում ավելի ճիշտ կլինի խոսել խաղացողի «օգտակարության» մասին), ապա մանկավարժական դիտարկումների արդյունքում մենք եկանք հակասական եզրահանգման: Այն է՝ չկա որևէ հավաստի համապատասխանություն ֆուտբոլիստի օրգանիզմի բարձր գործառույթային վիճակի և նրա խաղային վարպետության մակարդակի միջև: Այլ կերպ ասած՝ միևնույն ֆուտբոլիստը մի խաղում կարող է դրսևորել փայլուն ունակություններ՝ գտնվելով միջին կամ ցածր գործառույթային վիճակում, և հակառակը: Ուստի, մարզիկի մարզվածության և

մարզական վարպետության մակարդակի որոշումը կարող է կիրառվել միայն ֆունկցիոնալ համակարգերի տեսության ներքո [4]:

Արդյունավետության ցուցանիշների շարժընթացի առավել նշանակալի օրինաչափությունը վարքային գործառույթային համակարգի աճող լարվածության գործընթացում՝ ըստ դրա օգտակար հարմարվողական էֆեկտի, դիտարկումների ճշող մեծամասնության մեջ պարզ երևում է հոմեոպատիկ էֆեկտորներից ամեն մեկի նկատմամբ, որն արտահայտվում է արդյունավետության հետևողական բարձրացմամբ (արդյունքի «գնի» իջեցմամբ). բեռնվածության միջև որոշակի անհատական մակարդակի բարձրացումը, ինչը որոշվում է հետազոտվողի հոգեբանական վիճակով և մարզվածության մակարդակով:

Մարզիկի բեռնվածության մակարդակի մոտեցումը օպտիմալ մակարդակին զուգորդվում է արդյունավետության բարձրացմամբ, իսկ այդ սահմանից դուրս՝ իջեցմամբ: Սա տալիս է մարզիկի հոգեֆիզիկական վիճակի բարելավմանը միտված առավել բարենպաստ ռեժիմի ընտրության հնարավորություն:

Այսպիսով, եթե խոսքը մարզիկի բարձր սպորտային վարպետության մասին է, ապա գործառույթային համակարգի լարված գործունեության ժամանակ առավել գնահատելի են համակարգի և դրա առանձին մասերի արդյունավետության ցուցանիշները, իսկ երբ խոսվում է բարձր գործառույթային վիճակի և մարզվածության մասին, ապա գնահատելի են դառնում համակարգի հավասար

րակշռությունը և գործառույթային պահուստների աճի հնարավորությունը:

Գործունեության և վիճակի քանակական վերլուծության մեթոդը հիմնված է օգտակար արդյունքի և ծախսվող միջոցների համեմատու-

թյան գնահատականի վրա, և երբ դրանք դառնում են բավականաչափ համընդհանուր, կարող են կիրառվել տարբեր մակարդակի և նշանակության գործառույթային համակարգերի նկատմամբ ևս:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анохин П.К. Очерки по физиологии функциональных систем. – М.: Медицина, 1975.– 477 с.

2. Григорян С.В. Оценка динамики показателей сопряжения внешнего дыхания и кровообращения у футболистов. Вестник МАНЭБ, Санкт-Петербург. том 9, N 3, 2004, стр 185.

3. Судаков К.В. Общая теория функ-

циональных систем. – М.: Медицина, 1984.– 224 с.

4. Grigoryan S.V. Estimation of efficiency of sportsmen training activity by the method of bioimpedance analysis of cardio-vascular system. VIth International Sport Science Conference “Scientific management of high performance athlete’s training” Vilnius, 2004.

## РЕЗЮМЕ

### ФИЗИОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ РАЗВИТИЯ СПОРТИВНОЙ ТРЕНИРОВАННОСТИ И МАСТЕРСТВА

**С.В.Григорян**

*профессор кафедры кинезиологии Армянского государственного института физической культуры, доктор медицинских наук*

**М.С.Григорян, З.М.Мириджанян**

*преподаватели кафедры кинезиологии Армянского государственного института физической культуры*

При изучении возможностей совершенствования спортивного мастерства необходимо рассматривать спортивную деятельность как с точки зрения адаптивных реакций организма в ответ на регулярную и тяжелую физическую нагрузку, так и с точки зрения целост-

ных поведенческих реакций. Использование принципов системного «квантования» поведения позволяет провести тонкое аналитическое исследование целенаправленной деятельности спортсмена в реальных условиях участия в соревнованиях, дает возмож-

ность определить «физиологическую цену» достижения этапных и конечных спортивных результатов. Задачей исследования являлось выявить динамику показателей вегетативных функций на разных ступенях развертывания целостной поведенческой реакции при спортивной деятельности. На этом этапе исследований мы пытались выяснить существуют ли вегетативные корреляты высокого уровня тренированности спортсмена и какова динамика функциональных показателей организма по мере приобретения им мастерства. Анализ полученного материала показал, что нет никакого достоверного соответствия между высоким функциональным состоянием организ-

ма футболиста и высоким уровнем его игрового мастерства.

Այսպես, կարմիր և կանաչ գույների կրկնման քանակը 90 հետազոտվողներից ճիշտ են որոշել փորձարկվողների 48,9%-ը, այն դեպքում, երբ 1 և 5 թվերի, շրջանի, եռանկյան կրկնման քանակը՝ փորձարկվողների միայն 40,0% և 35,5%-ը: Հավանաբար վառ գույներն ավելի դյուրինությամբ են ընկալվում թույլ տեսող երեխաների կողմից, քան թվերը և երկրաչափական պատկերները:

Վերլուծելով փորձարարական հանձնարարությունների կատարման արդյունքներն ըստ տարիքի՝ դժվար չէ նկատել, որ դասարանից դասարան գույների, թվերի, տարբեր երկրաչափական մարմինների տեսողական ընկալումը փոխվում է անհամաչափ: Մի դեպքում այն աճում է հավասարաչափ, մյուս դեպքում՝ թռիչքաձև: Այդ հատկապես ակնառու է երևում առանձին կատարված հանձնարարությունների արդյունքների վերլուծության ժամանակ (Աղյուսակ 1):

Այսպես, աղյուսակ 1-ից հետևում է, որ I-IV դասարանների թույլ տեսող երեխաները տեսողությամբ համեմատաբար լավ էին որոշում 100 վանդականոց աղյուսակում կարմիր գույնի կրկնման քանակը (53,3%), քան կանաչի (44,4%): Հավանաբար՝ կարմիր գույնի պայծառությունը տեսողության խանգարումով երեխա-

ներին թույլ է տալիս տեսողությամբ ավելի լավ ընկալել այն, քան կանաչինը: Այդ մասին նշում են նաև հենց իրենք՝ երեխաները:

Հետաքրքիր է նշել, որ I-IV դասարանների փորձարկվողներից 41,7%-ը, հարյուր վանդականոց աղյուսակում գույների քանակի որոշման ժամանակ սխալվելով, հաճախ նշում էր իրական թվից քիչ պատասխան: Հավանաբար, ձգտելով ավելի արագ կատարել հանձնարարությունը՝ տեսողության խանգարումով երեխաները բաց էին թողնում գույները:

Այսպես, աղյուսակ 1-ից հետևում է, որ I-IV դասարանների թույլ տեսող երեխաները տեսողությամբ՝ համեմատաբար լավ էին որոշում 100 վանդականոց աղյուսակում կարմիր գույնի կրկնման քանակը (53,3%), քան կանաչինը (44,4%): Հավանաբար՝ կարմիր գույնի պայծառությունը տեսողության խանգարումով երեխաներին թույլ է տալիս տեսողությամբ ավելի լավ ընկալել այն, քան կանաչինը: Այդ մասին են ընդգծում նաև հենց իրենք՝ երեխաները:

Հետաքրքիր է նշել, որ I-IV դասարանների փորձարկվողներից 41,7%-ը, հարյուր վանդականոց աղյուսակում գույների քանակի որոշման ժամանակ սխալվելով, հաճախ նշում էր իրական թվից քիչ պատասխանը: Հավանաբար, ձգտելով ավելի արագ կատարել հանձնարարությունը՝ տեսողության խանգարումով երեխաները բաց էին թողնում գույները:

Այսպես, կարմիր գույնի որոշման դեպքում այդ երեխաները կազմում էին 43,3%, իսկ կանաչի՝ մի փոքր քիչ՝ 40%, այն դեպքում, երբ հարյուր

Հարյուր վանդականոց աղյուսակում թույլ տեսնող երեխաների գույների կրկնման քանակի տեսողական ընկալման ցուցանիշները

Դասարան	Փորձարկվողների քանակ	Գույներ	Ցուցանիշներ								
			Աղյուսակում իրականում կրկնվում են	Նշված է							
				Ճիշտ	%	Իրականից ավել	%	Իրականից քիչ	%	Հրաժարվում են	%
I	17	Կարմիր գույն	20	6	35,29	-	-	10	58,82	1	5,88
		Կանաչ գույն	20	2	11,76	2	11,76	12	70,58	1	5,88
II	20	Կարմիր գույն	20	11	55	-	-	9	45	-	-
		Կանաչ գույն	20	10	50	3	15	7	35	-	-
III	25	Կարմիր գույն	20	14	56	2	8	9	36	-	-
		Կանաչ գույն	20	12	48	5	20	8	32	-	-
IV	28	Կարմիր գույն	20	17	60,71	-	-	11	39,28	-	-
		Կանաչ գույն	20	16	57,14	3	10,71	9	32,1	-	-
Ընդամենը	90	Կարմիր գույն	20	48	53,33	2	2,22	39	43,33	1	1,11
		Կանաչ գույն	20	40	44,44	13	14,44	36	40	1	1,11

վանդականոց աղյուսակում իրական թվից շատ նշում էին միայն 8,3 %-ը:

Վերլուծելով ըստ տարիքի տրված հանձնարարության կատարման արդյունքները՝ դժվար չէ նկատել, որ տեսողությամբ համեմատաբար լավ են ընկալում կարմիր և կանաչ գույները IV դասարանի երեխաները. փորձարկվողների 58,9%-ը

ճիշտ են որոշել դրանց քանակը հարյուր վանդականոց աղյուսակում: Իսկ առաջին, երկրորդ, երրորդ դասարաններում այդպիսի երեխաները համապատասխանաբար կազմում էին 23,5%, 52,5%, 52,0%: Այսպես, եթե առաջին դասարանում հարյուր վանդականոց աղյուսակում կարմիր գույնը ճիշտ են որոշել փորձարկվող-



ների 55,3%-ը, ապա կանաչը՝ ընդամենը 11,7%-ը երկրորդ դասարանում, համապատասխանաբար՝ 55%, 50% և այլն:

Այսպիսով, ընդհանրացնելով տվյալ աղյուսակում կարմիր և կանաչ գույների կրկնման քանակի որոշման ցուցանիշները՝ կարելի է ներկայացնել հետևյալ կարևոր եզրահանգումները.

- բացահայտված են I-IV-րդ դասարանների թույլ տեսնող երեխաների գույների տեսողական ընկալման համեմատաբար ցածր հնարավորություններ.
- տեսողության խանգարումով երեխաների տեսողական հնարավորությունները դասարանից դասարան աճում են թռիչքաձև.
- փորձարկվողները համեմատաբար ճիշտ էին որոշում կարմիր, քան կանաչ գույնը.
- 100 վանդականոց աղյուսակում թույլ տեսնող երեխաները հաճախ նշում էին գույների կրկնման իրական թվից պակաս քանակ:

Ուշագրավ է նշել, որ գույների տեսողական ընկալման համեմատությամբ՝ ավելի ցածր հնարավորություններ նկատվում են թվերի, երկրաչափական պատկերների որոշման ժամանակ: Այս դեպքում փորձարկվողների միայն 40%-ը կարողացավ ճիշտ որոշել հարյուր վանդականոց աղյուսակում 1, 5 թվերի կրկնման քանակը, այն դեպքում, երբ 60%-ը սխալվելով նշում էր երբեմն ավել, երբեմն պակաս քանակ, քան իրականում կար (Աղյուսակ 2): Աղյուսակից երևում է, որ փորձարկվողները տեսողականորեն 1 թիվը համեմատաբար ավելի լավ

են ընկալում, քան 5 թիվը:

Այսպես՝ առաջին դեպքում 90 փորձարկվողներից հանձնարարությունը ճիշտ էին կատարել 39 (43,3%), իսկ երկրորդ դեպքում՝ միայն 33 (36,7%) հոգի:

Ինչպես մենք, այնպես էլ իրենք՝ փորձարկվողները, այս երևույթը դժվարանում ենք բացատրել: Հավանաբար մեկ թվանշանի պատկերը հինգի համեմատությամբ պարզ է և տեսողականորեն առավել հեշտ ընկալելի: Հաստատված է նաև, որ ինչպես նախորդ, այնպես էլ այս հանձնարարությունը կատարելիս տեսողության խանգարումով փորձարկվողներն ավելի հաճախ նշում էին թվերի կրկնման իրական քանակից պակաս պատասխանը: Այսպես, երեխաներից միայն 13,9%-ը 100 վանդականոց աղյուսակում 1 և 5 թվերի կրկնման քանակը որոշելիս սխալմամբ նշում էին իրական թվից ավելի պատասխան՝ այն դեպքում, երբ ճիշտ թվից պակաս քանակ ընդգծում էր փորձարկվողների 46%-ից ավելին:

Հետազոտման արդյունքների հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ հարյուր վանդականոց աղյուսակում թվերի որոշման տեսողական հնարավորությունները տարիքի հետ փոխվում են ոչ միանշանակ: Այսպես, մեկ թվի կրկնման քանակի ճիշտ որոշման ցուցանիշներն առաջինից չորրորդ դասարանում աստիճանաբար աճում են: Առաջին դասարանում այսպիսի երեխաները կազմում են 35,2%, իսկ երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում այս տոկոսն աճում է մինչև 40%, 44%, և 50%: Այն դեպքում, երբ հինգ թվի կրկն-

Հարյուր վանդականոց աղյուսակում թույլ տեսնող երեխաների կողմից մեկ և հինգ թվերի տեսողական ընկալման տարիքային փոփոխությունների ցուցանիշները

Դասարան	Փորձարկվողների թիվ	Թվերը աղյուսակում	Ցուցանիշներ								
			Կրկնման իրական թիվ	Նշված է							
				Ճիշտ	%	Իրականից ավել	%	Իրականից պակաս	%	Հրաժարվում են	%
I	17	մեկ թիվ	13	6	35,29	3	17,64	8	47	-	-
		հինգ թիվ	10	5	29,41	2	11,76	10	58,82	-	-
II	20	մեկ թիվ	13	8	40	5	25	7	35	-	-
		հինգ թիվ	10	5	25	6	30	9	45	-	-
III	25	մեկ թիվ	13	11	44	2	8	12	48	-	-
		հինգ թիվ	10	7	28	5	20	13	52	-	-
IV	28	մեկ թիվ	13	14	50	2	7	12	42	-	-
		հինգ թիվ	10	16	57,14	-	-	12	42,85	-	-
Ընդամենը	90	մեկ թիվ	13	39	43,33	12	13,33	39	43,33	-	-
		հինգ թիվ	10	33	36,66	13	14,44	44	48,88	-	-

ման քանակի որոշման ժամանակ այս ցուցանիշները տարիքի հետ մեկ աճում, մեկ նվազում են: Այսպես, առաջին դասարանում հարյուր

վանդականոց աղյուսակում հինգ թվի կրկնման քանակը ճիշտ որոշեցին փորձարկվողների 29,4%-ը: Երկրորդ դասարանում այս երեխաների

թիվը մի փոքր նվազում է: Երրորդ դասարանում այդ թիվը որոշակիորեն աճում է, չորրորդ դասարանում հանձնարարությունը ճիշտ կատարողների քանակն արդեն կազմում է փորձարկվողների 57%-ը:

Այսպիսով, ընդհանրացնելով տվյալ հանձնարարության կատարման արդյունքները՝ կարելի է նշել՝

- բացահայտված է, որ տեսողության հետ կապված հանձնարարության կատարման ժամանակ, հետազոտվողները նշում էին իրական թվից պակաս քանակ:

Մեզ հետաքրքրում էր, թե փորձարկվողները տեսողականորեն ինչպես կընկալեն տարբեր երկրաչափական պատկերները: Վերլուծելով հերթական հանձնարարության արդյունքները (որոշել հարյուր վանդականոց աղյուսակում շրջանի և եռանկյունու կրկնման քանակը)՝ հնարավոր է նկատել, որ երկրաչափական այդ պատկերներն ավելի դժվար էին տեսողականորեն ընկալվում, քան նախորդ հանձնարարությունների ժամանակ: Այսպես՝ 90 փորձարկվողներից միայն 35,6%-ը կարողացավ ճիշտ որոշել երկրաչափական պատկերների կրկնման քանակը: Նրանցից 64%-ից ավելին սխալվում էր (Աղյուսակ 3): Աղյուսակից երևում է, որ այստեղ նույնպես, ինչպես նախորդ հանձնարարություններում, փորձարկվողները սխալմամբ հաճախ ավելի քիչ քանակ էին նշում, քան կար իրականում:

Հետաքրքիր է նշել, որ թույլ տեսողների համար տվյալ հանձնարարության կատարման դեպքում սկզբունքային նշանակություն չունեցող առաջարկվող պատկերը եռանկյուն

է, թե՛ կլոր: Այս դեպքում փորձարկվողները դրսևորեցին գրեթե միանման՝ ցածր տեսողական հնարավորություններ: 90 փորձարկվողներից միայն 32-ը (35,6%) ճիշտ որոշեց դրանց կրկնման քանակը: Վերլուծելով հետազոտման արդյունքներն ըստ տարիքի՝ դժվար չէ նկատել, որ դրանք, ինչպես նախորդ հանձնարարություններում, համեմատաբար աճում են դասարանից դասարան: Այսպես, եթե հարյուր վանդականոց աղյուսակում շրջանի կրկնման քանակի որոշման դեպքում առաջին դասարանում հանձնարարությունները ճիշտ կատարել էին փորձարկվողների 23,5%-ը, ապա չորրորդ դասարանում այդպիսի երեխաների թիվը հասնում է 46,4%-ի: Նման պատկեր է նկատվում նաև հարյուր վանդականոց աղյուսակում եռանկյան կրկնման քանակի որոշման ժամանակ: Հարյուր վանդականոց աղյուսակում շրջանի տեսողական ընկալման աճն առավել արտահայտված չէ, քան եռանկյան որոշման դեպքում: Միաժամանակ կարևոր է նկատել, որ չնայած ուսումնասիրվող ցուցանիշները դասարանից դասարան համեմատաբար աճում են, սակայն, այնուամենայնիվ, չորրորդ դասարանում դրանք մնում են ցածր:

Ինչպես ցույց են տալիս փորձարարական տվյալները, հետազոտվողների 65%-ը չկարողացավ ճիշտ կատարել տվյալ հանձնարարությունը, ինչը նույնպես վկայում է 1-4-րդ դասարաններում սովորող թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման ցածր մակարդակի մասին:

Հարյուր վանդականոց աղյուսակում թույլ տեսնող երեխաների կողմից շրջանի և եռանկյան կրկնման քանակի տեսողական ընկալման ցուցանիշները

սարան	Փորձարկվողների թիվը	Աղյուսակում երկրաչափական մարմինների պատկերները	Ցուցանիշներ								
			Աղյուսակում իրական թիվը	Նշված է							
				Ճիշտ	%	Իրականից ավել	%	Իրականից պակաս	%	Հրաժարվում են	%
I	17	շրջան	23	4	23,52	5	29,41	3	17,64	5	29,41
		եռանկյուն	21	5	29,41	4	23,52	3	17,64	5	29,41
II	20	շրջան	23	5	25	7	35	8	40	-	-
		եռանկյուն	21	6	30	4	20	10	50	-	-
III	25	շրջան	23	10	40	3	12	12	48	-	-
		եռանկյուն	21	9	36	2	8	14	56	-	-
IV	28	շրջան	23	13	46,42	5	17,85	10	35,71	-	-
		եռանկյուն	21	12	42,85	4	14,28	12	42,85	-	-
Ընդամենը	90	շրջան	23	32	35,55	20	22,22	33	36,66	5	5,55
		եռանկյուն	21	32	35,55	14	15,55	39	43,33	5	5,55

Այսպիսով, վերը նշված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել՝

- հետազոտվողների կողմից համեմատաբար ավելի վատ են ընկալվում երկրաչափական պատկերները, քան գույները և թվերը,
- թեև դասարանից դասարան աճում է երկրաչափական պատկերների տեսողական ընկալման մակարդակը, սակայն, միևնույն է, այն գտնվում է ցածր մակարդակի վրա:

Այսպիսով, անցկացված հետազոտության արդյունքները վկայում են թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման ցածր հնարավորությունների մասին: Փորձարկվողների գերակշիռ մեծամասնությունը չկարողացավ ճիշտ որոշել հարյուր վանդականոց աղյուսակում առաջարկված գույների և առարկաների կրկնման քանակը:

Պարզված է նաև, որ այդ երեխա-

ները համեմատաբար լավ էին ընկալում հարյուր վանդականոց աղյուսակում գույների կրկնման քանակը, քան թվերինը և երկրաչափական պատկերներինը: Թեև տեսողական ընկալման զարգացման մակարդակն ըստ տարիքի որոշակիորեն աճում է, միևնույն է՝ նույնիսկ չորրորդ դասարանում այն մնում է շատ ցածր, ինչը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում թույլ տեսնողնե-

րի խաղային, ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ ձևերի վրա: Տվյալ համակազմի երեխաների համար հատուկ մանկավարժական մոտեցումների, խաղերի ու խաղային վարժությունների մշակումը կնպաստի տեսողական ընկալման զարգացմանը: Այս հետազոտության արդյունքները որոշեցին մեր հետագա գիտական մշակումների հիմնական ուղղությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարության Մ.Կ., Թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման հատուկ խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Զանգակ-97, Երևան, 2012,- 40 էջ:

2. Григорева Л.П., Сташевский С.В. Основные методы развития зрительного восприятия у детей с нарушением зрения. – М., Педагогика. – 1990.– 58 с.

3. Земцова М.И. Некоторые особенности психического развития детей с нарушением зрения // Дети с глубокими нарушениями зрения / Под ред. Земцовой М.И., Каплан А.И., Певзнер М.С./ – М., 1967, с.24-48.

4. Плаксина Л.И. Развитие зрительного восприятия у детей с нарушениями зрения в процессе обучения математике.– Калуга; Издательство <Адель>, 1980. 118с.

### РЕЗЮМЕ

#### ИССЛЕДОВАНИЕ УРОВНЯ РАЗВИТИЯ ЗРИТЕЛЬНОГО ВОСПРИЯТИЯ У СЛАБОВИДЯЩИХ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

**М.К.Марутян**

*доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, кандидат педагогических наук, заместитель декана факультета специального образования*

В статье анализируются результаты исследования уровня развития зри-

тельного восприятия у слабовидящих школьников I-IV классов.

**SUMMARY**

**RESEARCH OF A LEVEL OF THE DEVELOPMENT OF VISUAL PERCEPTION AT THE VISUALLY IMPAIRED YOUNGER STUDENTS**

**M.K.Marutyan**

*Associate professor in Chair of Special Pedagogy and Psychology, Khachatour Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences, Vice- dean of the faculty of Special education*

In the article are analyzed results of research of a level of visual perception at visually impaired school students of the I-IV classes.

## ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ. Ռ. Մկրտչյան

*«Մարի Իզմիրյանի անվան մանկապրուն» ՊՈԱԿ-ի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

### Հանգուցային բառեր և արտահայտություններ.

տեսողության խանգարում, թույլ տեսնող, գրավոր խոսքի խանգարումներ, խոսք, սխալներ, թելադրություն, հնչյունահնչույթային սխալներ:

Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրավոր աշխատանքների (արտագրություն, թելադրություն, նկարի շուրջ շարադրություն) ուսումնասիրման և վերլուծության արդյունքում բացահայտել ենք հիմնական և առավել հաճախ հանդիպող այն սխալները, որոնց պատճառը խոսքի զարգացման շեղումներն են, և որոնք պայմանականորեն խմբավորված են ըստ հետևյալ տեսակների.

- տառերի հնչունա-հնչույթային փոխարինումներ և տեղաշարժեր
- տառերի ու վանկերի տեղափոխումներ և բացթողումներ
- ապաքերականացում
- բառի մասերի և բառերի միասին ու անջատ գրելաձև
- որոշ հոգեկան գործընթացների թերզարգացումով պայմանավորված սխալներ:

Խոսքի զարգացման շեղումներով պայմանավորված գրավոր խոսքի խանգարումների թվին մենք առաջնահերթ դասեցինք տառերի հնչունահնչույթային փոխարինումներն ու

տեղաշարժերը: Լոգոպեդական հետազոտություններում դրանք մանրամասն ուսումնասիրել և հետազոտել են Ռ.Ե.Լևինյան (1959-1971), Ս.Ս.Լյապիդևսկին (1963 1965), Ն.Ա. Նիկաշինյան (1959-1968), Լ.Ֆ.Սպիրովան, Ա.Վ.Յաստրեբովան (1957 1968), Մ.Կ.Բուռլակովան (2001), Ս.Գ. Կարապետյանը (2003) և այլք:

Տիֆլումանկավարժության ոլորտում այդ հիմնախնդիրը բավարար չափով լուսաբանված չէ: Այդ սխալների միայն հնչյունային բնույթն է եղել խոր ուսումնասիրման առարկա [6, 9, 10]: Այդ պատճառով թույլ տեսնող երեխաների գրավոր աշխատանքներում մենք առաջին հերթին վերլուծեցինք տառերի և վանկերի հնչյունահնչույթային փոխարինումների և տեղաշարժերի բնույթը:

Անցկացված հաստատող փորձարկումների արդյունքները ցույց տվեցին, որ թույլ տեսնող երեխաների գրավոր խոսքում նորմալ տեսողությամբ երեխաների գրավորի համեմատությամբ) ավելի լայն տարածում ունեն հնչյունահնչույթային սխալները: Այսպես, ըստ I-IV դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների վերլուծության (արտագրություն, շարադրություն, թելադրություն, գրավոր՝ նկարի

շուրջ)՝ տառերի և վանկերի հնչյունահնչությային փոխարինումներն առկա են 45,3% հետազոտվողների աշխատանքներում. I դասարանցի-

ների՝ 54,2 %-ը, II դասարանցիների՝ 50,2%-ը, III և IV դասարանցիների՝ համապատասխանաբար 40,6%-ը և 40,5%-ը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀԵՏԱԶՈՏՎՈՂՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ԹՈՒՅԼ ՏՎԱԾ ՀՆՉՑՈՒՆԱՀՆՉՈՒԹԱՅԻՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Դասարան	Փորձարկվողներ	Գրավոր աշխատանքների տեսակները														
		Արտագրություն			Թեղադրություն			Գրավոր՝ նկարի շուրջ			Շարադրություն			Ընդամենը		
		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ	
			հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%
1	Թույլ տեսնող	82	42	51,2	52	30	57,7	54	30	55,5	-	-	-	188	102	54,2
	Նորմալ տեսնող	73	17	23,3	41	16	39,0	50	9	18,0	-	-	-	164	42	25,6
2	Թույլ տեսնող	53	25	47,1	302	152	50,3	89	44	49,4	50	27	54,0	494	248	50,2
	Նորմալ տեսնող	50	8	16	170	39	22,9	74	15	20,3	46	9	19,5	340	71	20,9
3	Թույլ տեսնող	38	13	34,2	248	99	39,9	29	12	41,4	89	40	44,9	404	164	40,6
	Նորմալ տեսնող	35	8	22,8	160	50	31,2	32	11	34,4	65	16	24,6	292	85	29,1
4	Թույլ տեսնող	58	19	32,7	127	50	39,4	127	49	38,6	147	68	46,2	459	186	40,5
	Նորմալ տեսնող	49	11	22,4	110	37	33,6	102	18	17,6	120	34	28,3	381	100	26,2
Ընդամենը	Թույլ տեսնող	231	99	42,8	72,9	331	45,4	299	135	45,1	286	135	47,21	545	700	45,3
	Նորմալ տեսնող	207	44	21,2	481	142	29,5	258	53	20,5	231	59	25,5	1177	298	25,3




Աղյուսակից երևում է, որ ուսումնասիրվող տարիքների թույլ տեսնող դպրոցականներն ավելի շատ հնչյունահնչությանին սխալներ թույլ են տալիս շարադրություններում, թելադրություններում, ինչպես նաև նկարի շուրջ գրավոր աշխատանքներում և արտագրություններում՝ գրքից կամ գրատախտակից:

Այսպես, եթե II դասարանի հետազոտվողների կեսից ավելին (54%) շարադրություններում թույլ է տվել տառերի հնչյունահնչությանին փոխարինումներ ու տեղաշարժեր, ապա արտագրության ժամանակ սխալները կազմել են 47,1%, իսկ III և IV դասարանների աշակերտների աշխատանքներում՝ դրանից էլ պակաս՝ 34,2% և 32,7%:

Թույլ տեսնող երեխաների համեմատությամբ հանրակրթական դպրոցի հետազոտվող աշակերտների բավականին քիչ թվով աշխատանքներում նկատվել են գրավորի սխալներ: Եթե I և II դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքներում դրանք կազմել են 54,2% և 50,2%, ապա նորմալ տեսողությամբ դպրոցականների աշխատանքներում՝ 20,9-ից–25,6%-ի սահմաններում: Մոտավորապես այդպիսի պատկեր էր նշվում նաև III-IV դասարանների աշակերտների գրավոր հանձնարարություններում:

Ներկայացված նկարում ակնառու է, որ հնչյունահնչությանին սխալներ ամենից առավել ի հայտ են գալիս I-II դասարանների թույլ տեսնող




Նկար 1. Հետազոտվողների գրավորում հնչյունահնչությանին սխալների առկայության համեմատական ցուցանիշները

դպրոցականների գրավոր աշխատանքներում, իսկ հետո, թեև IV դասարանում սխալները մի փոքր նվազում են, սակայն սխալների ցուցանիշները շարունակվում են մնալ բարձր:

Ուսումնասիրելով թույլ տեսնող երեխաների գրավոր աշխատանքներում տառերի ու վանկերի հնչյունահնչության փոխարինումներն ու տեղաշարժերը՝ մենք չբացահայտեցինք գրավորի մեջ թողնված այդ տիպի սխալների պայմանավորվածությունը հետազոտվողների տեսողության վիճակով (նկար 2), քանզի դա պայմանավորված է բանավոր խոսքի խանգարումներով [1, 2, 8, 10]: Այսպիսով, ամենացածր (0,05-0,08 միավոր) տեսողությամբ աշակերտ-

ների խմբում հնչյունահնչության սխալների քանակն այնքան շատ չէր, որքան համեմատաբար ավելի լավ տեսողություն ունեցող երեխաների խմբում (0,09; 0,2 միավոր և բարձր): Օրինակ՝ 0,05-0,08 միավոր տեսողության սրությամբ I դասարանի աշակերտների խմբում տառերի և վանկերի հնչյունահնչության փոխարինումներն ու տեղաշարժերը նկատվել են հետազոտվողների 37,2%-ի մեջ, իսկ 0,09-0,2 միավոր տեսողության սրությամբ երեխաների խմբում՝ աշակերտների 91%-ի մեջ: Այն դեպքում, երբ 0,2 միավորից բարձր տեսողության սրությամբ հետազոտվողների մեջ գրավորի այդ սխալները գտնվում էին նույն սահմանում՝ 37 %, այնպես, ինչպես եղել



Նկար 2. Հետազոտվողների տեսողության սրությամբ պայմանավորված գրավորի հնչյունահնչության սխալների ցուցանիշները

է բավական ցածր տեսողության (0,05-0,08 միավոր) ժամանակ: Ցուցանիշների մոտավորապես նույն պատկերն է նշվել մյուս դասարանների թույլ տեսնող աշակերտների դեպքում (նկար 2):

Այսպիսով, ակնհայտ է, որ թույլ տեսնող դպրոցականների գրավոր աշխատանքներում տառերի և վանկերի հնչյունահնչության փոխարինումներն ու տեղաշարժերը ուղղակիորեն պայմանավորված չեն տեսողության սրությամբ, այլ՝ հնչարտաբերական և հնչյունահնչության լսողության խանգարումներով:

Մեզ նաև հետաքրքրում էր, թե ինչպիսին է սուլական և շչական հնչյունների՝ ս, գ, ց, ճ, ժ, շ, չ հարաբերակցությունը տառերի հնչյունահնչության փոխարինումներում:

Թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների դիտարկումը վկայում է, որ հաճախ են նկատվում հետևյալ շփոթումները.

- չ-ց - ցիր-չիր, Խացիկ-Խաչիկ, պեցենի-պեչենի
- ս-շ -ասուն-աշուն, դաստ-դաշտ, սաքար-շաքար
- գ-ժ- զամ-ժամ, բազակ-բաժակ, ուղեղ-ուժեղ
- ճ-ժ - ծուտ-ճուտ, ծիպոտ-ճիպոտ, ծաս-ճաշ

Գրավոր աշխատանքների վերլուծությունը միաժամանակ ցույց տվեց, որ թույլ տեսնող երեխաների մեջ բավականին տարածված են ձայնեղ և խուլ բաղաձայնների փոխարինումները, հաճախ է հանդիպում ձայնեղ հնչյունների փոխարինումը խուլ հնչյուններով: Այսպես, տարրական դասարանների աշակերտներից

շատերը գրում են կարտալ-կարդալ, տերեր-դերեր, այտպես-այդպես: Առկա էին նաև գրավոր խոսքի խանգարման այնպիսի տարբերակներ, երբ նույն երեխաների դեպքում նկատվում էին տառերի երկկողմանի փոխարինումներ: Այսպես, Արման Կ., Տիգրան Պ., Դավիթ Լ. և Ու դասարանի այլ աշակերտներ աղաթի փոխարեն գրում են ատաթ (գնալ-կնալ, թուր - դուր):

Որոշակի հնչյունով սկսվող բառեր ընտրելու առաջադրանքի կատարման ժամանակ անհրաժեշտ բառերի հետ մեկտեղ երեխաներն ընտրում էին նաև այնպիսիք, որոնք սկսվում էին հնչույթների նույն խմբին պատկանող այլ հնչյուններով: Օրինակ՝ Լ, Ու դասարանների մի քանի աշակերտներ (Նարինե Ի., Համբարձում Կ., Տիգրան Ա. և ուրիշները) բառեր էին հորինում հետևյալ կերպ.

- ժ հնչյունով՝ զամ (ժամ), զակետ (ժակետ), զամացույց (ժամացույց)
- գ հնչյունով՝ սանգ (զանգ), ուժել (ուզել)
- շ հնչյունով՝ սենք (շենք)
- ռ հնչյունով՝ Լիմա (Ռիմա), յեհան (ռեհան), Լուբեն (Ռուբեն):

Բացահայտվել է, որ հանձնարարված հնչյունով սկսվող առարկաների նկարներ ընտրելու առաջադրանքների կատարման ժամանակ հետազոտվողները թույլ էին տալիս հետևյալ բնորոշ սխալները.

1. ընտրում էին այլ հնչյունով սկսվող նկարներ, ինչը խոսում է հնչույթների անբավարար տարբերակման մասին: Այստեղ, ինչպես և գրավոր ժամանակ, սխալները վերաբերում են այն հնչյուններին, որոնք պատ-

կանում են ազգակցական խմբերին. ծայնեղները միախառնվում են խուլերով, սուլական հնչյունները՝ շչականներով ( ու-լ):

2. Գրելիս կատարված սխալները բացահայտեցին բառի մեջ հնչյունների շարքի հերթականության սահմանման անբավարար կողմնորոշումը, ինչը արտացոլվում է գրավորի և տառերի տեղափոխման վրա:

Բացի տառերի ու վանկերի տեղափոխումներից և տեղաշարժերից, խոսքի ընդհանուր թերզարգացումով թույլ տեսնող երեխաների մեջ հանդիպում են գրավորի այլ բազմապիսի այլ սխալներ, որոնք համընկնում են նորմալ խոսքով թույլ տեսնող երեխաների սխալներին: Ի դեպ, խոսքի ընդհանուր թերզարգացումով թույլ տեսնող երեխաների մեջ դրանք հանդիպում են ավելի հաճախ: Դրանցից առավել տարածվածները բացթողումները, տառերի ու վանկերի տեղափոխումներն են, ինչպես նաև ուղղագրական սխալները: Դրանք հայտնաբերվեցին I-IV դասարանների թույլ տեսնող երեխաների 82,9%-ի մեջ:

Տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ նրանք բավականին հաճախ են բաց թողնում վանկեր: Դրանք նկատվում են ինչպես բառի վերջում (նկար-նկարել, գրպան-գրպանիկ), այնպես էլ այն դեպքում, երբ բառի մեջ կրկնվում են նույն ծայնավոր հնչյունով վանկերը (պարադես-պարահանդես):

Բացահայտված է, որ տառերի և վանկերի բացթողումներն ու տեղա-

փոխություններն ուղղակիորեն պայմանավորված են նաև գրավոր աշխատանքների տեսակներով:

Այսպիսով, թույլ տեսնող երեխաներն արտագրության, ինչպես նաև նկարի շուրջ գրավոր պատմություն հյուսելիս ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի քիչ սխալներ են թույլ տալիս, քան թելադրության և շարադրության ժամանակ (Աղյուսակ 2):

Աղյուսակից երևում է, որ արտագրության և նկարի շուրջ գրավոր պատմություն հյուսելու դեպքում I դասարանի փորձարկվող աշակերտների տառերի բացթողումներն ու տեղափոխությունները կազմում էին 82,9 և 88,9%, այն դեպքում, երբ թելադրության ժամանակ դրանք հասնում են 90,4%-ի:

Նկարից երևում է, որ տառերի ու վանկերի բացթողումներն առավել ի հայտ են գալիս I, II դասարանների թույլ տեսնող աշակերտների մեջ, հետագայում և հատկապես՝ IV դասարաններում, թեև դրանք մի փոքր նվազում են, սակայն շարունակում են մնալ բարձր՝ կազմելով 76,7%:


Անցկացրած հետազոտությունների արդյունքները վկայում են, որ տեսողության խանգարումներով երեխաների թույլ տված թվարկված սխալների հետ մեկտեղ արտահայտված է նաև խոսքի թերզարգացման ապաքերականացումը: Դա խոսքի թերզարգացում ունեցող երեխաների գրավոր խոսքի յուրատեսակ խանգարում է:

Մեր կողմից վերլուծված տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների 510 գրավոր աշխատանքներում (231 արտագրություն

Աղյուսակ 2

Թույլ տեսնող փորձարկվողների գրավորում տեղ գտած բացթողումների, տառերի ու վանկերի տեղափոխությունների ցուցանիշները

Դասարան	Գրավոր աշխատանքների տեսակները														
	Արտագրություն			Թելադրություն			Գրավոր՝ նկարի շուրջ			Շարադրություն			Ընդամենը		
	n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ	
		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%
	82	68	82,9	52	47	90,4	54	48	88,9	-	-	-	188	163	86,7
2	53	40	75,5	302	26,8	88,7	89	75	94,3	50	46	92	494	429	86,8
3	38	28	73,6	248	200	80,6	29	25	86,2	89	76	85,4	404	329	81,4
4	58	41	70,7	127	98	77,1	127	96	75,6	147	117	79,6	459	352	76,7
Ընդամենը	231	177	76,6	729	613	84,1	299	244	81,6	286	239	83,5	1541	1273	82,6



Դ ա ս ա ր ա ն ն ե ր

Արտագրություն    Թելադրություն    Գրավոր՝ նկարի շուրջ    Շարադրություն

Նկար 3. Թույլ տեսնող աշակերպների գրավոր աշխատանքներում տառերի և վանկերի բացթողումների և տեղափոխությունների ցուցանիշները

և 299 գրավոր՝ նկարի շուրջ) բացահայտված է՝ բառերի միասին և մեկ բառի տառերի անջատ գրության 212 (41,6 %) դեպք: Գրավորում հիշյալ սխալների այդքան լայն տարածված լինելու պատճառը ոչ թե քերականական կանոններին չտիրապետելն է, այլ թույլ տեսնող երեխաների խոսքի զարգացման անբավարար մակարդակը:

Վերլուծելով տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքները՝ մենք առանձին խմբերի դասեցինք անուշադրությամբ պայմանավորված սխալները՝ տառերի, վանկերի կամ բառերի կրկնություն, նախադասության մեջ բառերի բացթողումներ և այլն: Մենք հայտնաբերել ենք ընդհանուր առմամբ 531 (31,6 %) այդպիսի սխալներ, ընդ որում՝ դրանք առկա էին թույլ տեսնող աշակերտների գրած թելադրություններում (44,0 %), արտագրություններում (40,7 %), նկարի շուրջ հյուսած գրավոր աշխատանքներում (26,2 %): Անուշադրությամբ պայմանավորված սխալներն առավել բնորոշ են I, II դասարանների աշակերտներին (28,1 % և 57,8 %), և ոչ III, IV դասարանների աշակերտներին (25,2 % և 18,7 %):

Թույլ տեսնող I դասարանացիների բառապաշարը սահմանափակվում է հիմնականում այնպիսի առարկաների անվանումների իմացությամբ, որոնք հանդիպում են կենցաղում, առօրյա կյանքում: Օրինակ՝ գյուղական բնակավայրերի երեխաները լավ գիտեին տնտեսական գույքի, գյուղատնտեսական աշխատանքների տեսակների, ընտանի կենդանիների անունները, իսկ առօրյա կյան-

քի սահմաններից դուրս գտնվող բառերը գիտեին ոչ հաստատապես: Գրավոր խոսքի խանգարումներ ունեցող թույլ տեսնող երեխաները մեծ դժվարություններ են կրում օժանդակ բառերի յուրացման և գործածման հարցում:

Թույլ տեսնող երեխաների բառապաշարը հարստանում և հստակեցվում է նրանց տարիքային զարգացման և զգայական փորձի ընդլայնման, ուսուցման, լսողական ընկալման, հնչյունային վերլուծության կանոնավորմանը համապատասխան: Այնուամենայնիվ, մի շարք հեղինակների տվյալներով, նույնիսկ III, IV դասարանների թույլ տեսնող աշակերտների մեջ առկա են բառապաշարի զարգացման անզամ լուրջ թերություններ:

Այսպիսով, թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրավոր աշխատանքների վերլուծության արդյունքները վկայում են, որ գրելու ընթացքում առկա բազմաթիվ սխալներ մեծ մասամբ սովորողների խոսքի ընդհանուր թերզարգացման, ինչպես նաև խոսքի բառաքերականական կառույցի անբավարար ձևավորման հետևանք են:

Սահմանափակ բառապաշարը, խոսքի իմաստային կողմի անբավարար ձևավորվածությունը, բառի վերաբերյալ հստակ հնչյունային պատկերացումների բացակայությունը, բառերի տարբերականների ընտրության փոքր հնարավորությունը երեխային դնում են անհաղթահարելի կացության մեջ՝ դրանով իսկ դժվարեցնելով ուղղագրության կանոնների յուրացումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն /գիտամեթոդական հոդվածների ժողովածու Ռ.Ն. Ազարյանի խմբագրությամբ /Եր., 2004, 163 էջ:

2. Հատուկ մանկավարժության բառարան /Ռ.Ն. Ազարյանի և Վ.Գ. Խալաթյանի խմբագրությամբ/ Եր., 2001, 300 էջ:

3. Մկրտչյան Հ.Ռ., Տարրական դասարաններում սովորող թույլ տեսող երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկմանը նպատակաուղղված հատուկ հանձնարարությունների, խաղերի և թելադրությունների կիրառման արդյունավետության պայմանները /Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական հոդվածների ժողովածուում Ռ.Ն. Ազարյանի խմբագրությամբ/ Եր., 2004, էջ 40- 45:

4. Ազարյան Ռ.Ն., Սարգսյան Զ.Վ., Ինչպես պահպանել և լավացնել երեխայի տեսողությունը/ Եր., 1994, 55 էջ:

5. Պետրոսյան Ռ.Ժ., Ֆիզիկական կուլտուրան և աչքի հատուկ վարժությունները որպես տեսողության խախտման նախազգուշացման և տեսու-

ղական հոգնածության վերացման միջոց /Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական հոդվածների ժողովածուում:

6. Бондаренко А. И. Пути преодоления нарушений письма в процессе обучения родному языку: Автореф. дис. ... канд. пед. наук. – М., 1980.– 17 с.

7. Выготский Л. С. Основы дефектологии. Санкт-Петербург. –М.,2003.–654 с

8. Ермаков В. П., Якунин Г. А. Основы тифлопедагогтики: Развитие, обучение и воспитание детей с нарушением зрения: Учебное пособие для студентов высших учебных заведений. – М., 2000. – С. 123-130; 154-171.

9. Спирова Л. Ф. Графические ошибки при нарушении письма у детей с недоразвитием речи. “Проблемы психического развития аномального ребенка”. М.,”Просвещение”, 1966. С. 87-94.

10. Эльконин Д. Б. Развитие устной и письменной речи учащихся. // Хрестоматия по возрастной и педагогической психологии. – Под ред. И. И. Илясовой, В. Я. Ляудис. – М., 1980. – С. 254-265..Ն. Ազարյանի խմբագրությամբ/ Եր., 2002, էջ 44 – 47:

**РЕЗЮМЕ**

**ХАРАКТЕРИСТИКА НАРУШЕНИЙ ПИСЬМА У СЛАБОВИДЯЩИХ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ**

**А.Р. Мкртчян**

*директор “Детского дома имени Мари Измирлян”,  
кандидат педагогических наук, доцент*

В статье представлены результаты нарушений письма у слабовидящих младших школьников при списы-

вании, в диктанте, описании картинок, сочинении.

**SUMMARY**

**THE CHARACTERISTIC OF DISORDERS OF THE LETTER AT VISUALLY IMPAIRED YOUNGER SCHOOL STUDENTS**

**A. R. Mkrtchyan**

*Associate professor, Candidate of Pedagogical Sciences,  
Director of “Orphanage after Mari Izmirlyan”*

Article is devoted to the analysis of disorders of the letter at visually impaired younger school students at writ-

ing off, in a dictation, the description of pictures, the composition.



## К ВОПРОСУ О ВОССТАНОВЛЕНИИ РЕЧЕВОЙ КОММУНИКАЦИИ ПРИ АФАЗИИ

Ж.А.Пайлозян

*заведующая кафедрой логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна  
кандидат педагогических наук, доцент*

### **Ключевые слова и выражения:**

речь, речевая коммуникация, афазия, восстановление речевой коммуникации, речевая среда.

Коммуникативная функция является основной функцией речи. В различных литературных источниках указывается, что афазия, затрагивая сферу коммуникации, приводит к изменению взаимоотношений человека с человеком. У пациента нарушается речевой контакт с окружающими, приводящий к психической травме, панике, ощущению изоляции. Характерны уход в болезнь, неверие в возможность восстановления, эмоциональная лабильность, тревожность, изменение личностных свойств, отношений, сужение круга интересов (И.М.Тонконогий, 1959; В.В.Оппель, 1963, 1972; С.А.Дорофеева, 1975; Т.Г.Визель, 1998; М.К. Шохор-Троцкая (Бурлакова), 2000, 2001; и др).

Афазия приводит к изменению личного, семейного и социального статусов пациента [12, 4]. Семья, в которой появляется пациент с афазией “заболевает”, перестает функционировать [12]. У 29,05% пациентов в остром периоде инсульта отмечаются депрессивные расстройства, а у 37,35% пациентов – в раннем восстановительном пе-

риоде (на 2–3 месяца после инсульта). Депрессия ухудшает качество жизни не только пациентов, но и их родственников, снижает эффективность реабилитационных программ [8]. Заболевание члена семьи влечет за собой изменения не только его собственного настроения, но и настроения и поведения здоровых ее членов [15].

Ведущие афазиологи отмечают, что восстановление речевых навыков не всегда приводит к восстановлению речевой коммуникации. Пациенты с афазией испытывают трудности при общении с окружающими [6]. Зачастую пациенты не могут использовать даже те речевые возможности, которые у них имеются и нуждаются в стимуляции со стороны окружающих. Отмечено, что пациентам довольно долгое время не безразлично с кем вести беседу. При этом они испытывают панику, у них постепенно формируется отношение к себе, как к человеку, который не сможет вновь овладеть речью. Лучшее всего они говорят с логопедом, с которым регулярно занимаются, и часто оказываются беспомощными при разговоре с другими. Поэтому одним из правил восстановления речи является систематическое участие окружа-

ющих в логопедической работе, постепенное расширение круга лиц, с которыми общается пациент [9].

Самая трудная и важная задача логопеда – добиться, чтобы пациент применял приобретенные умения в ежедневном общении. С этой целью специально отбирается материал, на занятиях создаются проблемные ситуации, требующие актуализации ранее отработанного материала. Организуются показательные занятия для родственников, беседы с ними, с соседями по палате и с медицинским персоналом, во время которых логопед рассказывает, что пациент уже может и что необходимо от него требовать. Это преследует две цели: показать речевые возможности пациента и использовать ситуацию для закрепления восстановленных коммуникативных навыков [2].

Исследования показали, что афазия, вследствие дефектов коммуникации, вызывает существенное изменение самооценки: возникает ощущение неполноценности, страх речи, препятствующий общению. Вместе с тем в афазическом синдроме можно выделить не только негативные симптомы (симптомы выпадения), но и позитивные, показывающие, что у пациента сохранено, на что он способен в попытках речевого общения. В случаях, когда речь теряет значение средства социального приспособления, афазические синдромы становятся все беднее позитивными симптомами и все более единообразными [3].

В специальной литературе указывается, что восстановление речи и речевой коммуникации в первую очередь зависит от микросоциальной среды

пациентов, от его семьи. Семья – эта та первичная среда, через которую больному легче придти в нормальную социальную среду [10]. Результаты восстановления нарушенной речевой функции зависят и от помощи родственников пациента, которые должны содействовать активизации его личности, созданию для него первичной коммуникативной среды [12].

Социальная поддержка является неотъемлемой составляющей в преодолении трудных ситуаций, в том числе и проблем, связанных со здоровьем. Данные опроса Всероссийского центра изучения общественного мнения показали, что от 42,4 % до 55,9% опрошенных основными и самыми надежными источниками помощи считают родственников и друзей [14].

Между тем родственники нередко игнорируют работу логопеда или подходят к ней весьма упрощенно, говоря, что речь восстановится сама по себе или же, что они сами, без помощи специалиста, будут заниматься с пациентом. Подобный подход наносит большой психологический вред пациенту и осложняет работу логопеда. Привлечение семьи и близких к общению является важной задачей и эффективным методом восстановления речи и социоадаптации. Разумеется, окружающие, если они не имеют специального образования, не могут и не должны самостоятельно решать вопросы восстановительного лечения и обучения. Однако под руководством специалиста именно они могут способствовать выздоровлению, восстановлению и адаптации пациента [4].

Афазиологи не только отмеча-

յոտ необходимость организации речевой среды пациентов, но и предлагают конкретные подходы по восстановлению речи и речевой коммуникации. Так, для работы в семье рекомендуют подготавливать картинки, пособия, тексты, разнообразные лингвистические упражнения. Важно, чтобы один из членов семьи взял на себя роль репетитора и присутствовал на всех логопедических занятиях, следуя в промежутках между ними советам педагога. Члены семьи должны помогать ему вербализировать свои желания [1]. Родным и близким пациента следует внушать, что не только логопедические занятия, но и обычный бытовой речевой контакт способствует восстановлению речевого общения [6].

Снятию логофобии, ратормаживанию речи, увеличению речевой активности и подготовке пациентов к общению в обычной социальной среде способствуют групповые занятия (А.Д.Чернова, 1958; В.М.Коган, 1962; Э.С.Бейн, 1964; В.В.Оппель, 1972; Л.С.Цветкова и др., 1978, 1981; Н.Г.Калита, И.В.Зверкова, 1985 и др.). Так, например, на групповых занятиях с использованием предметно-практической деятельности, когда восстановление речи происходит в естественных, мотивированных условиях, общение становится необходимостью [7].

Наряду с накапливанием речевых навыков предлагаются “неречевые” способы общения (жесты, рисунки, пиктограммы). Специалисты советуют, чтобы каждое неречевое действие (жест, рисунок) говорящий член семьи сопровождал словами, что спо-

собствует “оживлению” слова [13]. Часто в процессе пользования знаками пациенты начинают произносить соответствующие слова [4].

Афазиологи пытаются сориентировать родственников и близких относительно линии поведения с пациентом и возможных перспектив восстановления у него речи и речевой коммуникации (Т.Г.Визель “Как вернуть речь” (1998); М.К.Шохор-Троцкая (Бурлакова) “Коррекция сложных речевых расстройств” (1997; 2000); Амосова Н.Н., Каплина Н.И. “Практические упражнения для восстановления речи у больных после инсульта, черепно-мозговой травмы и других заболеваний” (2005) и др.). Примечательны в данном контексте книга “The Stroke and Aphasia Handbook” (S.Parr, C.Pound, S.Byng, B.Moss, 2008) и ее американский вариант “The Aphasia Handbook” (M.T.Sarno, J.F.Peters), ориентированные на пациентов с афазией и их семьи. Эпиграфом к ним может послужить фраза: “Вы не одни!”. В них много ценных советов, необходимых пациентам с афазией и их близким для того, чтобы приспособиться к новым условиям жизни.

Что касается подобной литературы на армянском языке, то она весьма малочисленна, и этот пробел следует восполнить. С этой целью нами разработаны схема нейропсихологического обследования пациентов с афазией (ժ.Հ.Պալլըղյալի, ժ.Հ.Աճեմյալի, 2002), логопедические советы для родственников пациентов с афазией (ժ.Հ.Պալլըղյալի, 2008), методическое руководство по восстановлению речи при афазии, предназначенное для логопедов, психологов, врачей и других специа-

листов, работающих в сфере нейрореабилитации (Ժ.Հ. Պալլոյրաշի, 2010).

Вопрос восстановления речевой

коммуникации и вовлечения речевой среды пациента в этот процесс продолжает оставаться актуальным.

## ЛИТЕРАТУРА

1. Афазия и восстановительное обучение. //Тексты. /Под ред. Л.С.Цветковой, Ж.М.Глозман. – М., 1983.

2. Ахутина Т.В., Пылаева Н.М. Восстановительное обучение при грубой сенсомоторной афазии. – // Актуальные проблемы логопедической практики. / Отв. ред. М.Г. Храковская. – СПб., 2004. – С. 92 – 115.

3. Винарская Е.Н. Клинические проблемы афазии. – М., 1974.

4. Визель Т.Г. Как вернуть речь – М., 1998.

5. Калита Н.Г., Зверкова И.В. Психологический анализ новой системы восстановления коммуникативной функции речи при афазии. – //Дефектология – 1985. – #1. – С 197.

6. Кадыков А.С., Шахпаронова Н.В. Реабилитация после инсульта.–www.medlinks.ru., 2008.

7. Кошелева Н.В. Восстановление речевых и неречевых высших психических функций у больных с афазией в процессе предметно–практической и бытовой деятельности: Автореф. дис. ... канд.пед.наук. – М., 2010.

8. Мордвинцева Е.Р. Постинсультная депрессия: клинические аспекты диагностики и подходы к лечению:

Автореф. дис. ... канд. мед. наук. – М., 2008, www.dissercat.com.

9. Оппель В.В. Восстановление речи при афазии. – Л., 1963.

10. Цветкова Л.С. Социопсихологический аспект реабилитации больных с афазией. – М., 1979.

11. Шохор –Троцкая (Бурлакова) М.К. Речь и афазия. – М., 2001.

12. Шкловский В.М. Социально–психологический аспект реабилитации больных с афазиями. // Ж. невропат. и психиат. – М. – 1982, – вып.2. – С. 248 – 253.

13. Шкловский В.М., Визель Т.Г., Боровенко Т.Г. К возможности использования неречевых (символических) уровней коммуникации при афазии. – // Дефектология. – 1982. – # 2. – С. 3 – 10.

14. Шумакова И.Е. Социально–психологические факторы преодоления трудных жизненных ситуаций: Автореф. дис. . . . канд. психол. наук. – М., 2011.

15. Янковская Е.М. Комплексный подход к психотерапевтическому сопровождению семей больных, перенесших инсульт. – Автореф. дис. ... канд. психол. наук. – СПб., 2008.

**ԱՄՓՈՓՈՒՄ**

**ԱՖԱԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ժ.Հ.Պայլոզյան**

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Աֆազիայի ժամանակ խանգարվում է խոսքային հաղորդակցումը, ինչը բացասաբար է անդրադառնում հիվանդի ինքնագնահատականի, ընտանեկան և սոցիալական կարգավիճակի վրա: Խոսքային հաղորդակցման վերականգնումն առաջին հերթին կախված է հիվանդի միկրո-սոցիալական միջավայրից, նրա ընտանիքից: Մասնագետները՝ կարևոր

րելով ընտանիքի դերը աֆազիայի հաղթահարման գործում, առաջարկում են խոսքային հաղորդակցման վերականգնմանը նպաստող խորհորդներ և հնարներ: Աֆազիա ունեցող անձանց խոսքային հաղորդակցման վերականգնման խնդիրը արդիական է և հետագա ուսումնասիրությունների կարիք ունի:

**SUMMARY**

**SPEECH COMMUNICATION RESTORATION IN CASE OF APHASIA**

**J. H. Paylozyan**

*Associate professor, Candidate of Pedagogical Sciences, Head of Chair of the Speech and Rehabilitation therapy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University*

Speech communication disorders appear during the aphasia, that have negative influence on the self-esteem, family and social status of patients. The speech communication restoration depends on the microsocial environment of the patient and his family. The specialists, signifying the role of the

family in the process of overcoming aphasia, offer some methods and ways that will help him in speech communication restoration. The problem of speech communication restoration of people with aphasia is up-to-date and needs further research.

## ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ЭЛЕМЕНТОВ И ПРЕДПОСЫЛОК УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ У ДОШКОЛЬНИКОВ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ

Л. И. Плаксина

*заведующая отделением специальной психологии Московского государственного педагогического университета, доктор психологических наук, профессор*

### **Ключевые слова и выражения:**

учебная деятельность, дети с нарушением зрения, элементы, предпосылки, дошкольники, эксперимент, испытываемые, ориентировка, зрительное восприятие, амблиопия и косоглазие.

Как известно из литературы (А. В. Запорожец, Д. Б. Эльконин, З. М. Богуславская, 1965), по мере накопления опыта познавательной деятельности к концу дошкольного периода развития ребенка можно наблюдать наличие основных элементов и предпосылок учебной деятельности, развитые формы которой складываются в период школьного обучения.

Исходя из этого, для выявления уровня овладения определенными умениями у дошкольников с косоглазием и амблиопией нами был отобран материал и задания, в процессе выполнения которых имелась возможность наблюдать и констатировать уровни овладения элементами учебной деятельности на простых и знакомых детям сведениях и действиях.

Об уровнях овладения ребенком предпосылками учебной деятельности можно было судить по осознанию им цели задания, соблюдению правил и

точности выполнения различных действий и отношению к результатам своих действий.

Целью эксперимента было выявление возможностей детей точно выполнять предметно-практические действия счета предметов в различных предметно-практических ситуациях.

Результаты задания на определение эквивалентности множеств показали, что дети с амблиопией и косоглазием, при некоторой общности с нормально видящими сверстниками, имели значительные отличия. По качеству действий выделились три группы:

- испытываемые, владеющие практическими и умственными действиями счета;
- испытываемые, выполнившие практические действия счета, но не сумевшие сделать заключения о равенстве множеств;
- испытываемые, не пользующиеся практическим действием счета для сравнения множеств, то есть дети дали вербальные ответы, без опоры на счет.

Считая предметы, расположенные далеко друг от друга, они затруднялись в последовательном прослеживании

всех элементов множества по порядку, часто пропускали отдельные единицы в ряду. Эти ошибки особенно свойственны детям с нарушением зрения.

Нарушение глазодвигательных функций усложняет процесс прослеживания элементов в ряду. Нарушенные локализация и фиксация сказывается на нахождении объекта в ряду множеств. Так как у детей нет подлинности видению истинного положения объекта, то происходит двоение, наложение одного объекта на другой. Все это обуславливает специфичность предметно-практических действий.

Замечено, что дети с нарушением зрения, в связи с монокулярным его характером, выполняли задания с объемными элементами множеств с большим трудом, чем с плоскостными.

При выделении количественной стороны множеств дети допускали ответы без опоры на практические действия счета, с трудом усваивали инструкцию, состоящую из нескольких последовательных действий. Наблюдались медленная включаемость в задание и быстрое утомление, особенно там, где была большая нагрузка на зрение.

Сохранение в памяти сосчитываемых объектов у детей с нарушением зрения проходило значительно сложнее, им приходилось возвращаться для повторного счета.

Детям с нарушением зрения значительно труднее удавалось выполнять задания на определения количества элементов множеств при расположении их на макроплоскости; недостаточность зрительного анализа и контроля создает дополнительные труд-

